ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Աշոտ Ենգոյան
Առնակ Սարգսյան
Խոսրովադուխտ Ազատյան

«ԱՂԳ-ԲԱՆԱԿ» ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ԳԱՂԱՓԱՐԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
YEREVAN STATE UNIVERSITY
1919

Ереванский государственный университет
Факультет международных отношений

Ашот Енгоян
Арнак Саргсян
Хосровадухт Азатян

ПОЛИТИКО-ИДЕОЛОГИЧЕСКИЕ ОСНОВЫ КОНЦЕПЦИИ “НАЦИЯ-АРМИЯ”

Yerevan State University
Faculty of International Relations

Ashot Yengoyan
Arnak Sargsyan
Khosrovadukht Azatyan

THE IDEOLOGICAL AND POLITICAL BASIS OF THE “NATION-ARMY” CONCEPT

Ереван/Yerevan
Изд. ЕГУ/YSU Press
2019

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Ենգոյան Աշոտ Փայլակի
Սարգսյան Առնակ Գեորգիի
Ազատյան Խոսրովադուխտ Գարեգինի

«ԱԶԳ-ԲԱՆԱԿ» ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ԳԱՂԱՓԱՐԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2019

ՀՏԴ 355
ԳՄԴ 68
Ե 473

Հրատարակության է երաշխավորել ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի գիտական խորհուրդը:

Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՆ ԳՊԿ-ի կողմից տրամադրվող ֆինանսական աջակցության շնորհիվ՝ N18T-5F243 գիտական թեմայի շրջանակներում:

Գրախոսներ՝
պ.գ.դ., պրոֆեսոր Ա. Մանուկյան
ք.գ.թ., դոցենտ Է. Քալանթարյան

Ենգոյան Ա. Փ., Սարգսյան Ա. Գ., Ազատյան Խ. Գ.
Ե 473 «Ազգ-բանակ» հայեցակարգի գաղափարաքաղաքական հիմքերը/Ա. Փ. Ենգոյան, Ա. Գ. Սարգսյան, Խ. Գ. Ազատյան,- Եր.: ԵՊՀ հրատ., 2019, 92 էջ:

«Ազգ-բանակ» հայեցակարգի գաղափարաքաղաքական հիմքերը» աշխատությունն անդրադարձ է կատարում համազգային բանակի ձևավորման միջազգային փորձին, մասնավորապես այդ գործում մեծ հաջողություններ գրանցած Շվեյցարիայի, Յակոբինյան դիկտատուրայի օրոք Ֆրանսիայի և Իսրայելի օրինակներին, դրանց ընդհանուր օրինաչափությունների վերհանմանը, ինչը կապահովի մեր հասարակության համար ընկալելի և առավել արդյունավետ մեխանիզմների կիրառում: Այս առումով ուսումնասիրությունը կարող է օգտակար լինել ինչպես տեսական հետազոտության դիտանկյունից, այնպես էլ գործնականում:

Աշխատությունը նախատեսված է բուհերի ուսանողների և նշված հիմնահարցով զբաղվող մասնագետների լայն շրջանակի, ինչպես նաև ՊՆ համակարգի հետազոտական ստորաբաժանումների համար:

ՀՏԴ 355
ԳՄԴ 68

ISBN 978-5-8084-2384-8

© ԵՊՀ հրատ., 2019
© Հեղ. խումբ, 2019

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 7

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Ս. ՀԱՆԹԻՆԳԹՈՆԻ ԵՎ Մ. ՋԱՆՈՎԻՑԻ՝ ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՈԴԵԼԱՎՈՐՈՒՄԸ 13

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ ՇՎԵՅՑԱՐԻԱՅՈՒՄ ... 19

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱԿԻ ԳԱՂԱՓԱՐԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻՆ ԲՆՈՐՈՇ ԳԾԵՐԸ ՖՐԱՆՍԻԱՅՈՒՄ 34

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

«ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՀԱՄԱԶԳԵՍՏՈՎ ԱԶԳԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ» ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ԻՐԱԳՈՐԾՈՒՄԸ ԻՍՐԱՅԵԼՈՒՄ 52

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

«ԱԶԳ-ԲԱՆԱԿ» ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ԿԵՆՍԱԳՈՐԾՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ 72

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 81

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 87

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Ազգ-բանակ» հայեցակարգի գաղափարաքաղաքական հիմքերի վերլուծությունը ժամանակակից հայ քաղաքագիտության կարևոր հիմնախնդիրներից մեկն է: Չնայած վերջինիս շուրջ ծավալվող քննարկումները դեռևս չեն դադարում հասարակական-քաղաքական դիսկուրսի առարկա լինել, այնուամենայնիվ հիմնահարցի վերաբերյալ մասնագիտական գրականության մեջ խորքային հետազոտությունների սակավություն է նկատվում: Բացի դրանից՝ նախորդ տարի ՀՀ-ում տեղի ունեցած «Թավշյա հեղափոխության» և իշխանափոխության գործընթացները հայեցակարգի գաղափարաքաղաքական հիմքերի վերհանման և վերարժևորման հիմնախնդրին վերստին արդիականություն են հաղորդել: Ներկայիս իրողության պայմաններում գաղափարին նոր լիցքեր տալու հնարավորություններ են ստեղծվել: Սկզբունքորեն նոր հենքի վրա «Ազգ-բանակ» հայեցակարգի գաղափարաքաղաքական հիմքերի վերհանումը հայոց ազգային գաղափարախոսության համատեքստում դիտարկելը կարող է բանակ-հասարակություն հոգևոր միասնության, ազգային համախմբման և այդ արժեհամակարգի՝ հասարակական գիտակցության մեջ արմատավորման հիմք դառնալ:

Առանց գաղափարական բաղադրիչի ոչ մի նման ծրագիր, ոչ մի հայեցակարգ չի կարող իրականացվել[1]: Այս դիտանկյունից առավել քան կարևոր է քաղաքական էլիտայի դիրքորոշումը, որը կարող է վճռորոշ նշանակություն ունենալ հայ հասարակության համար: Այդ է պատճառը, որ «Ազգ-բանակ» հայեցակարգի նկատմամբ մասնագիտական և գիտագործնական հետաքրքրու-

[1] Տե՛ս **Ենգոյան Ա.,** «Ազգ-բանակ» հայեցակարգի գաղափարաքաղաքական հիմքերը, http://www.ysu.am/news/hy/Ashot-Yengoyan-about-his-scientific-theme, հասանելի՝ 03.07.2019:

թյունն աճել է՝ քաղաքագիտության հրամայականներից մեկը դարձնելով հիմնահարցի խորը ուսումնասիրությունը:

Հանրային գիտակցության մեջ շատ հաճախ «Ազգ-բանակ» գաղափարն ընկալվում է նեղ իմաստով, և շեշտադրվում է միայն վերջինիս ռազմական հայեցակետը: Ամեն մի գաղափար իրականություն է դառնում այն ժամանակ, երբ ներթափանցում է զանգվածների գիտակցության մեջ[2]: Հետևաբար նշված հայեցակարգի գաղափարաքաղաքական սկզբունքները հիմնավորելու պարագայում այն կդառնա հասարակական գիտակցության մի բաղադրիչը:

«Ազգ-բանակ» գաղափարը նոր չէ և ուղղակիորեն բխում է հայոց ազգային գաղափարախոսությունից: Հայ ժողովուրդը «Ազգ-բանակ» գաղափարաբանությանը հավատարիմ վարք ցուցաբերել է պատմական տարբեր ժամանակներում:

Արցախյան հերոսամարտի սկզբնական փուլում չունենալով պետականություն, կանոնավոր բանակ, կաղրային զինվորականներ՝ հայը կարողացել է ինքնակազմակերպվելով ողջ ներուժը ծառայեցնել խորհրդային նախկին զինվորականներից, ինքնապաշտպանական խմբերից ազգային կանոնավոր բանակի ձևավորմանը և հաղթանակներ գրանցել Արցախյան ազատամարտում[3]: Հայ հասարակությունն այդ օրերին հիրավի վերածվել էր բանակի: Հենց այդ միասնականության պայմաններում էլ իրականություն դարձավ հայության դարավոր իղձը՝ Արցախի ազատագրումը:

Ընդհանրապես առանց հասարակական լեգիտիմության և բարոյահոգեբանական մթնոլորտի բարձր աստիճանի որևէ բանակ չի կարող հաջողություն գրանցել: «Հոգեբանությունը և զին-

---

[2] Տե՛ս **Ենգոյան Ա.,** Արդի դարաշրջանի գաղափարախոսական հոսանքները, Ե., 2002, էջ 13:

[3] Տե՛ս **Макиенко К. В.,** В ожидании бури: Южный Кавказ, Центр анализа стратегий и технологий, М., 2018, էջ 64-65:

վորը» գրքում «մարտական ոգի» հասկացությունը շատ դիպուկ է բնութագրել Ն. Կոուպլենդը՝ գրելով. «Դա մարդուն հայտնի ամենահզոր զենքն է, ավելի հզոր, քան ամենածանր տանկը, քան ամենաուժեղ հրանոթը, քան ամենակործանիչ ռումբը: Բանակի բարոյական բարձր վիճակն այն միջոցն է, որն ի զորու է պարտությունը վերածել հաղթանակի: Բանակը ջախջախված չէ, քանի տիրապետող չէ պարտության գիտակցումը, քանի որ պարտությունը մտահանգում է, ոչ թե ֆիզիկական վիճակ[4]»: «Ազգ-բանակը» հաղթողի հոգեբանություն սերմանող գաղափար է:

Ցավոք, իրականության օբյեկտիվ՝ ռազմաքաղաքական պատճառներով պայմանավորված՝ «Ազգ-բանակ» գաղափարի իրագործումը ներկայումս ևս արդիական է: Հարկ ենք համարում նշել այդ հանգամանքներից մի քանիսը:

- Պատմությունը ցույց է տալիս, որ չնայած քաղաքակրթության ընդհանուր զարգացմանը, ժողովրդավարության տարածմանը, խաղաղասիրական կառույցների և միջնորդական կազմակերպությունների ստեղծմանը՝ պատերազմների թիվն ու մարդկության կյանքում դրանց դերն ամենևին էլ չեն նվազել: Ռազմական ճանապարհով սեփական շահերի բավարարման մեթոդը այսօր էլ շարունակում է մնալ գերակա: Ամեն մի պետության անվտանգության ապահովումն առաջին հերթին կախված է զինված ուժերի մարտունակությունից և ռազմարդյունաբերական համալիրի զարգացումից: Պատերազմական իրադրության մեջ գտնվող երկրների համար նշված խնդիրն առավել քան արդիական է: Գտնվելով աշխարհաքաղաքական բարդ իրավիճակում՝ արտաքին վտանգը ստիպում է մեզ էլ ավելի համախմբվել: Երկու կողմից հակառակորդ պետություններով շրջափակված լինելը, արդեն քառորդ դար Հայաստանի քաղաքական թե՛ ներքին և թե՛ արտա-

[4] Տե՛ս https://www.northern.am/images/git-hraparakum/Azg-Banak.pdf, հասանելի՝ 15.02.2019:

քին կուրսի մշակման վրա կողմնորոշիչ ազդեցություն ունեցող հիմնախնդրի՝ Ղարաբաղյան կոնֆլիկտի կարգավորման առկախված մնալը ստիպում են մեզ ունենալ հզոր, XXI դարին համապատասխան արդիականացված պաշտպանական համակարգ: «Ազգ-բանակ» հայեցակարգը պետք է լինի այդ համակարգի գաղափարաքաղաքական հենքը, ինստիտուցիոնալ կառույցներին շունչ հաղորդողը:

- Անկախության ձեռքբերումից ի վեր Հայաստանի Հանրապետության համար ամենամեծ նվաճումներից մեկը, անկասկած, մարտունակ բանակն է: Ապրիլյան քառօրյա պատերազմը ասվածի վառ ապացույցն է, որը, սակայն, միևնույն ժամանակ բացահայտեց հայոց բանակում առկա շատ լուրջ հիմնախնդիրներ: Ներկայումս այդ հիմնախնդիրների հաղթահարման ուղիների մշակման, աշխարհաքաղաքական նոր իրավիճակի պայմաններում բանակ-հասարակություն փոխհարաբերությունների վերարժևորման, ռեսուրսների կառավարման ճիշտ մեխանիզմներ ընտրելու անհրաժեշտություն է առաջացել: Բանակը չպետք է կաշկանդող հանգամանք լինի, բեռ դառնա հասարակության համար. այն պետք է նպաստի վերջինիս հոգևոր և նյութական զարգացմանը:

- Անցումային շրջանում գտնվող երկրների համար, ինչպիսին ՀՀ-ն է, ամենակարևոր հիմնախնդիրներից մեկը քաղաքացիական ոլորտի՝ զինված ուժերի (այսուհետ՝ ԶՈՒ) ինստիտուտի նկատմամբ վերահսկողության սահմանումն է: Այս տեսանկյունից շատ կարևոր են ԶՈՒ բյուջետային հատկացումների թափանցիկությունը, ԶՈ ժողովրդավարական վերահսկողությունը նաև ՀՀ օրենսդիր մարմնի միջոցով, ԶՈՒ ինստիտուտի՝ օրենսդրին հաշվետու լինելու մեխանիզմների ճշգրտումը: «Ազգ-բանակ» հայեցակարգը կարող է նպաստել զինված ուժերի էլ ավելի ժողովրդա-

վարացմանը, այդ մշակույթի զարգացմանը և բանակի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության ամրապնդմանը:

- «Ազգ-բանակ» գաղափարի ինստիտուցիոնալացման գործընթացը դեռ նոր է սկսել: Դրա իրագործումը փուլային բնույթ է ենթադրում: Այս տեսանկյունից մեզ համար չափազանց կարևոր են համազգային բանակի միջազգային փորձի, մասնավորապես այդ գործում մեծ հաջողություններ գրանցած Շվեյցարիայի, Ֆրանսիայում Յակոբինյան դիկտատուրայի և Իսրայելի օրինակների ուսումնասիրումը, ընդհանուր օրինաչափությունների վերհանումը, ինչը թույլ կտա ապահովել մեր հասարակության համար ընկալելի և առավել արդյունավետ մեխանիզմների կիրառում: Այդ օրինակների ուսումնասիրությունը, սակայն, չպետք է հետապնդի դրանց մեխանիկական ընդօրինակում, այլ պետք է հարմարեցվի հայաստանյան պայմաններին՝ հաշվի առնելով բանակաշինության գործում մեր ունեցած լավագույն ավանդույթները և ազգային առանձնահատկությունները:

«Ազգ-բանակ» հայեցակարգի գաղափարաքաղաքական հիմքերի ուսումնասիրության հիմնական նպատակներն են.

1. բանակ-հասարակություն փոխհարաբերությունների հաջողված և ուսանելի փորձ ունեցող երկրների օրինակների բացահայտումը, ինչը թույլ կտա համեմատական սկզբունքով զուգահեռներ անցկացնել դրանց և ՀՀ-ում այդ քաղաքականության իրականացման հիմնական մոտեցումների միջև՝ ցույց տալով դրանցում առկա նմանություններն ու տարբերությունները,

2. բանակ-հասարակություն համագործակցության գործընթացի ուսումնասիրությունը անցյալում և ներկայումս,

3. «Ազգ-բանակ» հայեցակարգի բազմակողմանի ուսումնասիրության իրականացումը և տեսագաղափարական հիմնավորումը,

4. բանակի բարոյական նկարագրի վրա հայոց ազգային գաղափարախոսության ունեցած ազդեցության վերհանումը,

5. քաղաքացիական հասարակության ինստիտուտի կայացվածության մակարդակի և պետության ինստիտուտի նկատմամբ դրա վստահության բացահայտումը,

6. քաղաքացիական արժեքների տարածման և ամրապնդման գործում բանակի դերի բացահայտումը,

7. ազգային ինքնության պահպանման հարցում «Ազգ-բանակ» հայեցակարգի ունեցած դերակատարման անհրաժեշտության վերհանումը,

8. հայկական սփյուռք-բանակ հատվածի միջև համագործակցության խորացմանն ուղղված նոր մեխանիզմների առաջքաշումը, հայրենիքից դուրս ապրող երիտասարդների մեջ ազգային բանակի նկատմամբ վստահության մակարդակի բարձրացումը, «Ազգ-բանակ» գաղափարի իրականացման գործում հայկական սփյուռքի ներգրավման նոր ուղիների մշակումը:

Այսպիսով՝ սույն աշխատանքում հետազոտվել է ազգային բանակի՝ Շվեյցարիայի, Ֆրանսիայի և Իսրայելի փորձը, վերլուծվել են պատմական այն շրջադարձային իրողությունները, որոնք ազդել են վերոհիշյալ երկրներում ազգային գաղափարահենք բանակի կազմավորման վրա: Մատնանշվել են «Ազգ-բանակ» հայեցակարգի վերարժեքորման միտումները ՀՀ-ում:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ
Ս. ՀԱՆԹԻՆԳԹՈՆԻ ԵՎ Մ. ՋԱՆՈՎԻՑԻ՝ ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՈԴԵԼԱՎՈՐՈՒՄԸ

1945 թ. ձևավորվել են տեսական մի շարք մոտեցումներ, որոնք բնութագրում են ինչպես քաղաքացիական հասարակությունը, այնպես էլ ԶՈՒ նկարագրողական և կանոնադրային հնարավոր հարաբերությունները: Այս առումով հատկանշական են Ս. Հանթինգթոնի և Մ. Ջանովիցի ուսումնասիրությունները: Ս. Հենթինգթոնի կողմից առաջ քաշված մոդելում (1957 թ.), ներկայացվել են ռազմաքաղաքացիական հարաբերությունների գործառական և սոցիալական հրամայականները: Միայն արդյունավետ ԶՈՒ-ն կարող է պաշտպանել հասարակությունը (գործառական հրամայական): Մյուս կողմից արդյունավետ ԶՈՒ-ն, ըստ սոցիալական հրամայականի, պոտենցիալ վտանգ է ներկայացնում հասարակության համար: Այն հռչակում է նորարարական, ինչպես նաև ինստիտուցիոնալ մեխանիզմներ, որոնք կերաշխավորեն քաղաքացիական հասարակության առաջնայնությունը: Ուստի ռազմական վստահելիության, արտաքին երաշխիքների ապահովման և ԶՈՒ ենթակայության միջև օպտիմալացված հավասարակշռություն գտնելը քաղաքական առաջնահերթություն է[5]:

Եթե քաղաքական վերահսկողությունն առավելագույնս բարձրացվի, որը կհանգեցնի ռազմական արդյունավետության նվազմանը, մենք գործ կունենանք այնպիսի մոդելի հետ, որը Ս. Հանթինգթոնը կոչել է «սուբյեկտիվ վերահսկողություն»: ԶՈՒ սուբյեկտիվ վերահսկողության մոդելում քաղաքացիական ոլորտի և ԶՈՒ-ի միջև հստակ բաժանում չկա. երկուսի սահմաններն էլ ա-

[5] Տե՛ս **Taylor E.,** Command in the 21st century: An introduction to civil-military relations, Naval postgraduate school, Monterey, California, June, 1998, էջ 27:

նորոշ են: Իսկ Ս. Հանթինգթոնի նախընտրած «օբյեկտիվ վերահսկողության» մոդելում ինքնավար ռազմական ոլորտը նախանշվում է որպես «ինքնուրույն մշակույթ», որը թույլ է տալիս առավելագույնս ապահովել ԶՈՒ արդյունավետությունը, բարձրացնել սպաների պրոֆեսիոնալիզմը, ձևավորել ռազմական փորձագետների չեզոք մարմին:

Օբյեկտիվ վերահսկողության տրամաբանության շրջանակներում Ս. Հանթինգթոնը կարևորում է իր տեսության առանցքային տարրերից մեկը՝ «ռազմական պրոֆեսիոնալիզմ» հասկացությունը[6]: Այսինքն՝ օբյեկտիվ վերահսկողության միջոցով ներդրվում են այնպիսի ընթացակարգեր, որոնք ապահովում են զինվորականների պրոֆեսիոնալ գործունեությունը:

Ամերիկյան ռազմաքաղաքացիական հարաբերությունների ուսումնասիրության տեսաբաններից է Մ. Ջանովիցը: Վերջինիս գիրքը՝ «Արհեստավարժ զինվորը. հասարակական-քաղաքական դիմանկարը», հրատարակվել է Ս. Հանթինգթոնի «Զինվորը և պետությունը» աշխատությունից հետո, և ինչպես վերջինիս գիրքը, այնպես էլ այդ աշխատությունը կենտրոնանում է սպայի հատկանիշների և պրոֆեսիոնալիզմի վրա: Սակայն Մ. Ջանովիցը չի ընդունում Ս. Հանթինգթոնի մասնագիտական իդեալական մոդելը և առաջ է քաշում «պրագմատիկ պրոֆեսիոնալիզմի» տեսությունը[7]:

Մ. Ջանովիցի պնդմամբ Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին սպայի որոշակի քաղաքականացումն անխուսափելի էր, քանի որ ռազմական ուժի գործոնը պայմանավորված էր խորհրդային սպառնալիքով: Ըստ նրա՝ կուսակցական պատկանելությունն անընդունելի է պրոֆեսիոնալ զինվորականի համար: Բայց միաժամանակ նա չի հերքում այն փաստը, որ սպա-

[6] Տե՛ս **Taylor E.,** նշվ. աշխ., էջ 38:
[7] Տե՛ս նույն տեղում:

յական անձնակազմը խստորեն կապված է պետության և ազգային քաղաքական համակարգի հետ[8]:

Հարկ է նշել, որ Մ. Ջանովիցը սպայական անձնակազմի վարքագծի փոփոխության վերաբերյալ ավելի լայն սահմանում չի ներկայացրել: Փոխարենը նա վերանայել է գերիշխող մոտեցումը՝ ավելի ճշգրիտ նկարագրելու համար գոյություն ունեցող վարքագծի ձևերը:

Նոր մոտեցում առաջքաշելով՝ Մ. Ջանովիցը ներկայացրել է ամերիկյան սպայական անձնակազմի փոփոխվող քաղաքական վարքագծի հինգ ուղղություն՝ միտում: Նախ նա հավաստիացնում էր, որ կարգապահական սկզբունքի փոփոխություն է տեղի ունեցել, որը հանգեցրել է «Կազմակերպչական հեղափոխության»: Ապա նշում է, որ «հրամանատարների հիմնական մտահոգությունը խստապահանջ կարգապահության պարտադրումը չէ, այլ բարձր մակարդակի նախաձեռնողականության և բարոյականության պահպանումը»[9]: Երկրորդ, Մ. Ջանովիցը ռազմաքաղաքացիական վերնախավի համալրման համար անհրաժեշտ հմտությունների որոշակի բնութագրիչներ էր մատնանշում: Ըստ նրա՝ պատերազմների փոփոխվող բնույթը պահանջում է, որ զինծառայողներն ավելի շատ «քաղաքացիական» դառնան: Որպես ապացույց Մ. Ջանովիցը մատնանշում էր այն փաստը, որ ԶՈՒ-ում գնալով մեծանում է տեխնիկական մասնագետների դերակատարումը[10]: Երրորդ, Մ. Ջանովիցը սպայակազմի հավաքագրման համար առավել լայն սոցիալական բազայի ձևավորում էր նախատեսում՝ պայմանավորված մշտական բազմաքանակ բանակի աշխատուժի պահանջմունքներով, ինչպես նաև ամերիկյան հասարակական հարաբերություններում տեղի ունեցող փոփոխություն-

[8] Տե՛ս նույն տեղում, էջ 38-39:
[9] Տե՛ս նույն տեղում, էջ 39:
[10] Տե՛ս նույն տեղում, էջ 39-40:

ներով: Չորրորդ, մեծ թվով հաջողված և մասնագիտական բարձր որակներ ունեցող սպաներ են ավելանում: Նրանց հաջողությունը պայմանավորված է կարիերայի ընթացքում ձեռք բերած հմտություններով և կողմնորոշումներով:

Մ. Ջանովիցի առաջ քաշած հինգերորդ միտումը վերաբերում է պրոֆեսիոնալ սպայի գաղափարաքաղաքական կողմնորոշումներին: Նա նշում է, որ տեղի է ունեցել ռազմական մտածելակերպի փոփոխություն, որը կնպաստի պատերազմական լարված հարաբերությունների կարգավորմանը:

Փաստորեն՝ Մ. Ջանովիցի նոր դոկտրինը նախատեսված էր ռազմական մասնագետին քաղաքական, սոցիալական, տնտեսական և այլ ոլորտների հիմնահարցերի վերաբերյալ համապարփակ և նախորդ դոկտրինի դրույթներից տարբերվող տեղեկատվություն տրամադրելու համար[11]:

Խոսքը, ըստ էության, լայն մտահորիզոն և աշխարհայացք ունեցող սպայի մասին է, որը կարող է այդպիսին դառնալ հասարակության հետ սերտ կապերի հաստատման արդյունքում:

Չնայած Մ. Ջանովիցի առաջ քաշած ամերիկյան սպայակազմի վարքագծի վերոհիշյալ միտումները այնքան էլ մոտ չէին Ս. Հանթինգթոնի ներկայացրած իդեալիստական պրոֆեսիոնալ մոդելին, այնուամենայնիվ ռազմաքաղաքացիական պրոֆեսիոնալիզմի վերաբերյալ վերջինիս սահմանումը նա չէր մերժում:

Մ. Ջանովիցի տեսության մեջ ազգային անվտանգության վերաբերյալ ռազմական գրեթե բոլոր առաջարկությունները հիմնված են ոչ միայն ռազմական, այլև քաղաքական և տնտեսական

[11] Տե՛ս **Taylor E.,** նշվ. աշխ., էջ 40-41:

բաղադրիչների վրա: Ըստ նրա՝ արդյունավետ է այն ռազմական համակարգը, որն օտարված չէ հասարակությունից[12]:

Հաջորդ հարցադրումը հետևյալն է. ինչպե՞ս կարելի է ազատական-ժողովրդավարական հասարակություններում քաղաքացիական վերահսկողություն իրականացնել: Նշված հարցի պատասխանը Մ. Ջանովիցը տալիս է՝ հիմնվելով Ս. Հանթինգթոնի դրույթների՝ պրոֆեսիոնալ չափանիշների և ավանդույթի վրա՝ նշելով, որ ռազմական բաղադրիչի նկատմամբ քաղաքացիական վերահսկողություն կիրականացվի գերիշխող քաղաքացիական արժեհամակարգի յուրացման պարագայում: Վերջինս կնպաստի ժողովրդավարական քաղաքացիական վերահսկողության ամրապնդմանը:

Պարտադիր զինծառայողը իր պարտականությունները կատարում է՝ հենվելով պրոֆեսիոնալիզմի և բարոյական արժեհամակարգի վրա: Նա պատասխանատվությամբ է իրականացնում քաղաքացիական վերահսկողության գործառույթները, քանի որ քաղաքացիական արժեքային ընկալումների կրողն է: Առանց ռազմական և քաղաքացիական ոլորտների միջև տարբերությունները մատնանշելու հնարավոր չէ մեղմել այն լարվածությունը, որը անսպասելի միլիտարիզմի (ռազմականացման) վտանգ է պարունակում[13]:

Հարկ է նշել, որ Ս. Հանթինգթոնի քաղաքացիական վերահսկողության մոդելը ապահովում է ռազմաքաղաքացիական կայուն հարաբերություններ, որոնց առանձին բաղադրիչներ թեև տարբեր են, սակայն կարևոր են պրոֆեսիոնալ ԶՈՒ-ի համար: Մյուս կողմից, Մ. Ջանովիցը առաջարկում է մի համակարգ, որը միավորում է տարբեր բաղադրիչներ: Նա, ինչպես Ս. Հանթինգթո-

---

[12] **Jesse W. L.,** The New Military Professional: Changing Conception of Military Professionalism in the Post War Period, Ph.D. Dissertation. Riverside, CA: University of California, Riverside, 1972 (հղումը տե՛ս **Taylor E.,** նշվ. աշխ., էջ 42):

[13] Տե՛ս նույն տեղում, էջ 42-43:

նը, կարևորում է սպայակազմի բարձր պրոֆեսիոնալիզմը, բայց նաև հաշվի է առնում ռազմականի կողմից գերիշխող քաղաքացիական արժեհամակարգի յուրացումը, որը Ս. Հանթինգթոնը չի ընդունում:

Մ. Ջանովիցի մոդելն իր կարևորությամբ հանդերձ ունի որոշ խոցելի կողմեր: Ամենամեծ խնդիրը հետևյալն է: Եթե ռազմականը յուրացնի գերիշխող քաղաքացիական արժեհամակարգը, ապա ինչպես է լարված իրադրության պայմաններում արդյունավետորեն ապահովվելու անվտանգային համակարգի պաշտպանությունը, երբ նրա վրա է ընկած քաղաքացիական արժեքների ու կողմնորոշումների ապահովման պատասխանատվությունը[14]:

[14] Տե՛ս **Kümmel G., Bredow W.,** նշվ. աշխ., էջ 38-39:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ
ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ ՇՎԵՅՑԱՐԻԱՅՈՒՄ

Պատմականորեն շվեյցարացիները եղել են ռազմատենչ ազգություն, ինչն այսօր դժվար է պատկերացնել՝ հաշվի առնելով ժամանակակից Շվեյցարիայի աշխարհաքաղաքական բացառիկ կարգավիճակը. վերջին անգամ Շվեյցարիան պատերազմել է 1813 թ. Լայպցիգում ֆրանսիական բանակի կողմից, երբ ռազմական գործողություններին մասնակցում էին 16000 շվեյցարացի վարձկաններ: Նապոլեոն Բոնապարտն այդ մարտում պարտվեց, որից հետո Շվեյցարիայի կառավարությունը որոշեց վերջ դնել վարձկանությանը և չեզոքության մասին որոշում ընդունեց, որն իր ամրագրումն ստացավ 1815 թ. Վիեննայի կոնգրեսում: Եվրոպական խոշորագույն երկրները ճանաչեցին Շվեյցարիայի չեզոքությունը՝ երաշխավորելով նրա սահմանների անձեռնմխելիությունը[15]:

Մինչ այդ Շվեյցարիան բուռն և արյունալի պատմություն է ունեցել: Միջնադարյան շվեյցարական բանակի համբավը հայտնի էր ողջ Եվրոպայում և համարվում էր լավագույնը: Ի սկզբանե շվեյցարական ազգային բանակը ժողովրդական աշխարհազոր էր, որը ձևավորված էր «միլիցիայի սկզբունքով» և առանձին կապեր ուներ կանտոնների հետ: Եվ միայն Հելվետյան հանրապետության շրջանում էր, որ (1798-1803) ձևավորվեց Շվեյցարիայի առաջին կանոնավոր բանակը[16]:

---

[15] Տե՛ս **Пошар О.,** Венский конгресс и судьба швейцарского нейтралитета, https://www.swissinfo.ch/rus/politics/%D0%B8%D1%81%D1%82%D0%BE%, հասանելի՝ 13.12.2018:

[16] Տե՛ս Внутреннее развитие Швейцарии в эпоху Гельветической республики и Второй коалиционной войны 1797-1803 гг, https://schwingen.net/2016/napoleon-gelveticheskaja-respublik/, հասանելի՝ 24.11.2018:

Միջնադարյան շվեյցարական բանակի ռազմարվեստի առանձնահատկությունների ուսումնասիրման հիմնախնդիրը մշտապես գտնվել է հիմնահարցով զբաղվող տեսաբանների ուշադրության կիզակետում: Այդ ժամանակահատվածում այն իր մարտունակությամբ և բարոյահոգեբանական որակներով էականորեն տարբերվում էր միջնադարյան Եվրոպայում ավանդույթ դարձած իշխանական և քաղաքային աշխարհազորներից:

Եկամտի այլ աղբյուր չունենալու պատճառով տղամարդիկ պատերազմող Եվրոպայի համար դառնում էին վարձկաններ: Երբեմն պատահում էր այնպես, որ, օրինակ, ֆրանս-գերմանական պատերազմների ժամանակ երկու կողմից էլ շվեյցարացի վարձկաններ էին կռվում[17]: Պատճառն այն է, որ բանակը խիստ անհատականացված էր. թեև զինվորները որպես կռվողներ ուժեղ էին, բայց միասնականության մասին դեռևս խոսք չկար:

Ժամանակի ընթացքում վարձկան զինվորականների պահանջարկն այնքան էր աճել, որ վարձկանությունը դարձել էր բնակիչների եկամտի հիմնական աղբյուրը: Այս առումով որոշ տեսաբաններ XIV-XV դարերի շվեյցարացիներին համեմատում էին վաղ շրջանի Հռոմեական հանրապետության բնակիչների հետ: Ինչպես շվեյցարացիները, այնպես էլ հռոմեացիները, հայրենասիրության խորը զգացում ունեին, ինչը, սակայն, միաժամանակ զուգակցվում էր նյութապաշտությամբ: Չնայած անսասան քաջությանը և ինքնազոհության բարձր աստիճանին՝ նրանց երկուսի համար էլ կարևորվում էր անձնական շահը[18]:

---

[17] Տե՛ս **Стариченок В., Лапчик С.,** Развитие военного искусства швейцарской армии на рубеже средневековья и Нового времени // Европа: актуальные проблемы этнокультуры: материалы V международной науч.-теорет. конф., г. Минск, 22 мая 2012 г. / Бел. гос. пед. ун-т им. М. Танка; редкол. Тугай В. (отв. ред.) [и др.], Минск: БГПУ, 2012, էջ 1:

[18] Տե՛ս http://militera.lib.ru/h/mehring_f/pre.html, հասանելի՝ 28.02.2019:

Միջնադարյան շվեյցարական բանակի հաջողությունը պայմանավորված էր մի շարք գործոններով, այդ թվում՝ երկրի սոցիալ-տնտեսական և քաղաքական զարգացման առանձնահատկություններով:

Շվեյցարական ռազմարվեստի դպրոցը ձևավորվել է հակահաբսբուրգյան պատերազմների արդյունքում այն բանից հետո, երբ 1291 թ. Շվիցի, Ուրիի և Ունթերվալդենի կանտոնները միավորվեցին Ավստրիական դաշինքի դեմ պայքարում: Դրանք գյուղական կանտոններ էին, որոնք գտնվում էին Շվեյցարիայի լեռնային շրջաններում: Բնակավայրերի լեռնային դիրքը և բնակչության ծայրաղքատ վիճակը թույլ չէին տալիս, որ երկիրը սեփական ֆինանսական միջոցների հաշվին կռվելու համար մեծ քանակությամբ ձիեր գներ: Հետևաբար հետևակային զորքերի ստեղծումը միակ և նպաստավոր տարբերակն էր[19]: Սովորաբար նման մոտեցումը հատուկ է նույնատիպ աշխարհագրական դիրք ունեցող ժողովուրդներին:

Շվեյցարական հետևակի կարևորությանն իր աշխատություններում առանձնահատուկ տեղ է հատկացրել նաև Ն. Մաքիավելին: Հետաքրքրական է նրա հիշատակումը 1513 թ. ֆրանսիացիների և շվեյցարացիների միջև ընթացող Նավարրայի ճակատամարտի վերաբերյալ[20]: Հետագայում Ն. Մաքիավելու գաղափարներն իրենց գործնական արտահայտությունը գտան Ֆլորենցիայում վերջինիս Ֆլորենցիայի հանրապետության կանցլերի պաշտոնը զբաղեցրած ժամանակ, երբ նա 1506 թ. ձևավորեց 20000 հոգուց բաղկացած ռազմական աշխարհազոր Շվեյցարիայից փոխառած միլիցիայի սկզբունքով: Յոթ տարի հետո՝ 1512

---

[19] Տե՛ս **Меринг Ф.,** Военно-исторические экскурсии // История войн и военного искусства / Ф. Меринг., СПб., 2000, էջ 87-88:

[20] Շվեյցարացիների 9000-անոց զորքը աննշան կորուստներով, առանց զենքի և հեծելազորի պարտության մատնեց ֆրանսիացիների 10000 հետևակ և 10000 հեծելազոր ունեցող զորքին (տե՛ս Макиавелли Н., Государь, էջ 310, 313, 315):

թ., իսպանացիների կողմից հանրապետության լիկվիդացումից և Ֆլորենցիայում Մեդիչիի իշխանության վերականգնումից հետո այն դադարեց գոյություն ունենալ[21]:

Շվեյցարական բանակի հաջորդ առանձնահատկություններից մեկը հետևակի քառակուսաձև դասավորվածությունն էր: Մարտավարական համախմբվածության և զանգվածային գրոհի անցնելու շնորհիվ շվեյցարացիները իշխանական զորքերին ջախջախելու մեծ հնարավորություն ունեին[22]: Սակայն բարոյահոգեբանական մթնոլորտից բացի՝ շվեյցարական ուժեղ բանակի գոյությունը չէր կարելի պատկերացնել առանց խիստ կարգապահության, որը երբեմն թուլանում էր: Ի տարբերություն այլ երկրների, որտեղ ճակատամարտի հաղթական ընթացքը պայմանավորված էր հրամանատարության մարտական պատրաստության բարձր աստիճանով, շվեյցարացիների պարագայում հակառակն էր. հաջողության հասնելը կախված էր զինվորներից: Ուստի շվեյցարացի վարձկանները ինքնավստահորեն անտեսում էին հրամանատարների կարգադրությունները՝ դրանք անհարկի համարելով. հարձակվում էին գլխավոր դիրքերում, երբ նախատեսված էր շրջանցել, չնայած որ սպասման հրաման կար: Զինվորները հրամանատարներին ասում էին. «Որտե՞ղ են սպաները, այդ կրկնակի աշխատավարձով թոշակառուները: Թող դուրս գան կռվեն: Թող բոլորը պայքարեն առաջին գծում»[23]: Հետևաբար այն բանակում, որտեղ շարքայինները հրամաններ են տալիս, իսկ սպաները կատարում դրանք, անհնար էր հաջողության հասնել առանց անկոտրում ուժի և անխոհեմ քաջության:

---

[21] Տե՛ս **Макиавелли Н.,** Государь, էջ 4- 5, 7: https://www.litmir.me/br/?b=18713&p=1 հասանելի՝ 09.02.2019:

[22] Տե՛ս **Уиндроу М.,** История военного искусства, М., 2018, էջ 107-108:

[23] http://militera.lib.ru/science/oman_c01/text.html?fbclid=IwAR3OksR6u0VsomKrN_xn_A-M9XymI6y-cTPAMlCWvm3bmtjqHqKo-Rrxwy8, հասանելի՝ 15.03.19:

Մարտավարական մյուս բնորոշ գիծն այն է, որ բանակը բաժանված էր ինքնավար միավորների՝ իհարկե, պահելով ընդհանուր հրամանատարության սկզբունքը: Ամեն տարի յուրաքանչյուր համայնք ընտրում էր երեք սպաներ, որոնք ոչ միայն ստուգում էին բնակչության մարտական պատրաստության աստիճանը, այլև զենքի առկայությունը[24]:

Ի տարբերություն իրենց հակառակորդների՝ շվեյցարացիները ռազմարվեստի սկզբունքորեն այլ ձևով էին կիրառում: Խոսքն այսպես կոչված «ոչնչացման ռազմավարության» մասին է: Եվրոպացիների համար հակառակորդի կենդանի ուժի ոչնչացումը առաջնային նպատակ չէր. կարևորը որքան հնարավոր է շատ գերիներ վերցնելն էր: Շվեյցարացիներն այլ կերպ էին գործում. լեռնային խիստ կլիմայի պայմաններում տնտեսվարումը մշտական աշխատանք և ջանք էր պահանջում: Գյուղացին չէր կարող երկար ժամանակ կտրվել հողից, իսկ հետևակով իշխանական սակավաթիվ զորքերի դեմ հնարավոր չէր դուրս գալ: Այդ պատճառով էլ տնական պատերազմներից խուսափելու համար նրանք որդեգրել էին հակառակորդին ոչնչացնելու քաղաքականություն: Գերի վերցնելն արգելված էր: Նշված հանգամանքը գուցե ոչ հումանիստական էր, սակայն սարսափ էր ներշնչում հակառակորդի մոտ[25]:

Հարկ է նկատել, որ շվեյցարացիները միշտ չէ, որ հաղթում էին պատերազմներում: Բայց անգամ պարտվողի կարգավիճակում նրանք նվաճողներից վերցնում էին լավագույնը. հռոմեացիները սովորեցրին նրանց կառուցել ճանապարհներ և քարե տներ, Նապոլեոն Բոնապարտը Սահմանադրություն տվեց նրանց, Հաբսբուրգները որպես ժառանգություն գեղեցիկ դղյակներ թողեցին…:

---

[24] Տե՛ս **Стариченок В., Лапчик С.,** նշվ. աշխ., էջ 3:
[25] Տե՛ս նույն տեղում, էջ 4:

Հայրենասիրության, քաջության և ինքնազոհաբերության խորը զգացումը շվեյցարացիների մոտ դրսևորվում էր դեռևս մանուկ հասակից: Թե՛ քաղաքացիները և թե՛ գյուղացիները, վաղ տարիքից սկսած, սովորում էին զենքի գործածության կանոնները և պատրաստ էին յուրաքանչյուր պահի «կացինը փոխարինել զենքով»: Ժողովուրդը մշտապես գտնվում էր մարտական պատրաստության վիճակում: Արական ողջ բնակչությունը պիտանի էր զինվորական ծառայության: Դեռևս միջնադարում, փաստորեն, աստիճանաբար ձևավորվում էր համընդհանուր զինապարտության գաղափարը: Ներկայումս ևս այս ավանդույթը շարունակվում է. ամենախաղաղ երկրում երեխաները սովորում են կրակել վաղ տարիքից: Ցյուրիխում մինչ այժմ պահպանվել է «տղաների կրակոց» կոչվող տոնը: Այդ օրը երիտասարդները մրցում են: Ուրլիբերգ լեռան ստորոտում վրաններ են տեղադրվում, ամենուր լսվում են կրակոցների ձայներ, մարդիկ քաղցրավենիք են ուտում, երգում և պարում: Այսպիսով՝ ժողովուրդը մեծարում է ապագա զինվորներին[26]:

Հետաքրքրական է Շվեյցարիայի ԶՈՒ ժողովրդավարական վերահսկողության մոդելը, որը յուրահատուկ կառուցվածքային հարաբերությունների ամբողջություն է: Ռազմաքաղաքացիական հարաբերությունների ձևաչափը այս երկրում մեծապես քաղաքական մշակույթի կայացվածության հետևանք է: Այլ երկրների ռազմաքաղաքացիական հարաբերությունների տարբեր հայեցակետերի հետ համեմատությունը ցույց է տալիս, որ այստեղ գործող վերահսկողությունը էականորեն տարբերվում է գործնական և օրենսդրական լիբերալ-ժողովրդավարական մեխանիզմների շնորհիվ: Հատկապես բացառիկ երևույթ է այն, որ անվտանգու-

[26] Фестивали и праздники в Швейцарии, տե՛ս http://guide.travel.ru/switzerland/entertainment/fest/?fbclid=iwar2yqg7v37wgnascxs5edlmdi6smf3muumpm_4f0m1kphte6eublcrr9_si, հասանելի՝ 18.04.2019:

թյան և ռազմական հարցերի շուրջ ևս հնարավոր է հանրաքվեի անցկացում, ինչը ուղղակի ժողովրդավարության ազդեցության հետևանք է և ապահովում է քաղաքացիների մշտական մասնակցությունն ու պատասխանատվությունը բանակի կայացման ու ամրապնդման գործում:

Դեռևս Արևմտյան և Արևելյան Եվրոպայում Արևելք-Արևմուտք հակամարտությունից հետո ԶՈՒ ժողովրդավարական վերահսկողության հարցը կարևորվում էր ներքոհիշյալ երկու պատճառներով.

1) նախկինում կոմունիստական իշխանության ներքո գտնվող Արևելյան Եվրոպայի ԶՈՒ ժողովրդավարացման գործընթացը պահանջում էր քաղաքական ինստիտուցիոնալացված վերահսկողություն: Օրինակ՝ ՆԱՏՕ-ի անդամ երկրների, մասնավորապես ԱՄՆ-ի և Արևմտյան Եվրոպայի երկրների մոդելները վերաբերում են ժողովրդավարացման նոր իրողություններին: Ինստիտուցիոնալ վերահսկողական մոդելների ներդրման առումով նշանակալի են նաև Գերմանիայի Դաշնային Հանրապետության զորքի ներքին ղեկավարման և Շվեյցարիայի ռազմական բանակի կատարելագործման ուղղությամբ արված քայլերը: Ակնհայտ է, որ այդ երկրները նախքան նշված ինստիտուցիոնալ վերահսկողական մոդելները կիրարկելը քաջատեղյակ են եղել դրանց նորմատիվ-իրավական կանոններին՝ չնայած այն հանգամանքին, որ ի տարբերություն ԱՄՆ-ի, որտեղ ռազմաքաղաքացիական հարաբերությունների վերաբերյալ գիտական բազմաթիվ ուսումնասիրություններ կան՝ Ս. Հանթինգթոնի, Մ. Ջանովիցի և ուրիշների կողմից իրականացված, իսկ Արևմտյան Եվրոպայում նման աշխատությունները գրեթե բացակայում են[27]:

---

[27] Տե՛ս **Kümmel G., Bredow W.,** Civil-Military Relations in an Age of Turbulence: Armed Forces and the Problem of Democratic Control, Haltiner K., Civil-Military Relations: Separation or Concordance? TheCase of Switzerland, Strausberg, October, 2000, էջ 33:

2) Արևելք-Արևմուտք հակամարտության ավարտն ավելի մոտեցրեց զանգվածային զորքերի վախճանը: ՁՈՒ ժողովրդավարական վերահսկողությունը սկսեց վերաբերել ոչ միայն հետխորհրդային Արևելքի նոր ժողովրդավարություններին, այլև կայուն արևմտաեվրոպական ժողովրդավարական պետություններին: Եվրոպայում ՁՈՒ դերակատարումը սկսեց նվազել. ՁՈՒ թվաքանակը կրճատվեց, և վերակազմավորման համար նոր պայմաններ ստեղծվեցին: Պարտադիր զինվորական ծառայության վերացումը և ՁՈՒ մասնագիտական բարձր ունակություններով օժտված կամավորներով համալրելը դարձան համաեվրոպական միտում: Արդյունքում ներկայումս Արևմտյան Եվրոպայի որոշ երկրներում պարտադիր զինվորական ծառայությունը դադարել է (Բելգիա, Նիդերլանդներ), իսկ դրա պաշտոնական դադարեցման ձևակերպում են ընդունել Ֆրանսիան, Իտալիան, Իսպանիան, Պորտուգալիան: Այլ երկրներում (Ավստրիա, Դանիա, Գերմանիա, Շվեդիա) շարունակվում է պարտադիր զինվորական ծառայության վերաբերյալ հանրային քննարկումը: Միաժամանակ պետք է նշել, որ ՁՈՒ կրճատումն ու սպառազինությանն ուղղված ծախսերի նվազեցումը միանշանակ չընկալվեցին հանրության կողմից: Որպես կանոն, պարտադիր զինվորական ծառայության վերացմանը հակադրվում էին զինվորականները՝ նշելով, որ այդ քայլերը ավելի շատ պայմանավորված են ֆինանսական գործոններով, քան անվտանգության նկատառումներով: Օրինակ՝ Բելգիայում զորակոչի վերացմանը դեմ արտահայտվեց գլխավոր շտաբի պետը, իսկ Նիդերլանդներում պարտադիր զինվորական ծառայության վերացումը ուժի մեջ մտավ միայն իշխանության շարունակական ճնշումների հետևանքով[28]:

Շվեյցարիան միակ դաշնային պետությունն է Եվրոպայում, որը դեռևս դարասկզբին կարողացել է առանց որևէ խոշոր զին-

[28] Տե՛ս **Kümmel G., Bredow W.,** նշվ. աշխ., էջ 33-34:

ված ընդհարման ձևավորել ինքնիշխան պետությունների միավորում, որոնցից յուրաքանչյուրն ունի իր առանձին զինված ուժերը: Չնայած ինքնիշխան պետությունների համախմբումն իրականացավ կամավոր հիմունքներով, այնուամենայնիվ կենտրոնական դերակատարությունը վերապահվեց դաշնային սահմանադրությանը, որը երաշխավորում էր շրջանների ինքնիշխանությունը ապահովող երկու կարևոր առանձնահատկություն. առաջինը ԶՈՒ-ի մասին առանձին կանոնադրություն ունենալու հնարավորությունն էր, երկրորդը՝ հարկերը բարձրացնելու իրավունքը: Սակայն ռազմական կանոնադրությունը, կենտրոնացված պետությանը հատուկ գործոններով պայմանավորված, կանտոններից փոխանցված էր դաշնությանը: Ներկայումս ևս ռազմաքաղաքացիական հարաբերությունների և ռազմական հարցերի կարգավորմանն ուղղված կարևորագույն սահմանադրական նորմերի սահմանման հիմնական իրավունքը վերապահված է դաշնությանը[29]:

Շվեյցարական բանակի և ռազմաքաղաքացիական հարաբերությունների յուրօրինակ ձևաչափի վրա իրենց ազդեցությունն են թողել Շվեյցարիայի ինչպես տեսական-լիբերալ, այնպես էլ պատմաքաղաքական պայմանները: Որպես օրինակ կարելի է նշել հանրաքվեի ինստիտուտը: 1872 թվականից սկսած՝ խորհրդարանի կողմից ընդունված սահմանադրական փոփոխությունները և օրինագծերը կարող էին հանրաքվեի դրվել, եթե դրանք ստորագրեր 50.000 քաղաքացի: 1891 թ. սահմանադրական փոփոխությունների արդյունքում հնարավոր դարձավ 100.000 ստորագրությամբ հանրային քվեարկության միջոցով սահմանադրական փոփոխություն իրականացնել, որն ավելի կարևոր էր, քան ընտրական գործընթացը[30]:

---

[29] Տե՛ս նույն տեղում, էջ 38-39:
[30] Տե՛ս **Kümmel G., Bredow W.,** նշվ. աշխ., էջ 46-47:

Նշված պրակտիկան կիրառվում է նաև ներկայումս. 1999 թ. մարտին անցկացված հանրաքվեի արդյունքում Շվեյցարիայի ժողովուրդը ընդունեց 1874 թ. սահմանադրության պաշտոնական դրույթները: Դրա բովանդակային մասը մնաց անփոփոխ: Պրոֆեսիոնալ զորքերը հիմնականում դաշնայինի կազմում էին, իսկ աշխարհազորը՝ կանտոններում: Սա էր պատճառը, որ ոչ միայն դաշնությունը, այլև յուրաքանչյուր շրջան ուներ պաշտպանության իր առանձին կառույցը: Զինծառայողն իր պարտականություններն իրականացնում էր կանտոնների ստորաբաժանումներում, սակայն համարվում էր Շվեյցարիայի պաշտպանության նախարարության ծառայող[31]: Իհարկե, այս սկզբունքը որոշակիորեն կարող է ընդունելի լինել դաշնություններում, այլ ոչ թե ունիտար պետություններում:

Ինչ վերաբերում է ԶՈՒ վերահսկողության գործում կառավարության և խորհրդարանի դերին, ապա Շվեյցարիան քիչ է տարբերվում այլ խորհրդարանական ժողովրդավարություններից:

Գերագույն հրամանատարությունը պատասխանատու է խորհրդարանի առաջ. իրականացնում է սպառազինությունների ապահովման մեխանիզմները և ժամանակ առ ժամանակ կարող է փոքրաքանակ զորավարժություններ կազմակերպել: Խորհրդարանը հաստատում է բյուջեն և վերահսկում է ԶՈՒ հիմնական-կազմակերպչական գործունեությունը: Զենքի սպառազինության համալրման ամենամյա ծրագիրը, ինչպես նաև օպերատիվ-ռազմավարական հայեցակարգերը, այսպես կոչված, բանակի ուղեցույցները, պետք է հաստատվեն խորհրդարանի կողմից: Գործադիր և օրենսդիր մարմինների բոլոր որոշումները ընդունվում են՝ ապահովելով ընտրազանգվածի վերջնական ձայնի իրավունքը[32]:

---

[31] Տե՛ս նույն տեղում, էջ 39:

[32] Տե՛ս **Haltiner K.,** Civil-Military Relations: Separation or Concordance? The Case of Switzerland: Civil-Military Relations in an Age of Turbulence: Armed Forces and the Problem of Democratic Control, Strausberg, October, 2000, էջ 40:

Շվեյցարիայում դաշնության ստեղծումից ի վեր ռազմական ոլորտի հիմնական փոփոխությունները՝ կապված ՁՈՒ օրենսդրության և դրանց վերահսկողության հետ, դրվում են հանրային քվեարկության:

Որպես կանոն, քաղաքացիները քաղաքական որոշումների ընդունման և վերահսկման գործընթացի մի շարք փուլերում դարձել են առավել կարևոր և առանցքային գործոն: Նրանք թերահավատորեն են վերաբերվում հեղափոխական շարժումներին, ինչպես նաև ռազմական ճանապարհով իշխանության ձեռքբերմանը:

Շվեյցարիայի գլխավոր շտաբի պետն ընտրվում է խորհրդարանի միջոցով: Այն խաղաղ ժամանակ գլխավոր շտաբի պետ չունի: Սա դաշնությունում ՁՈՒ ապակենտրոնացվածության և կանոնավոր բանակի բացակայության հետևանք է: Գլխավոր շտաբի պետը հեղինակավոր քաղաքական գործիչ է: Բացի դրանից՝ նրա ընտրության հարցում մեծ դեր են խաղում ոչ միայն ռազմական, այլև մի շարք քաղաքական և մշակութային գործոններ: Պատերազմ հայտարարելու, խաղաղություն հաստատելու և պահեստազորը մոբիլիզացնելու իրավունքը գտնվում է խորհրդարանի ձեռքում, որը միաժամանակ վերահսկողություն է իրականացնում ՁՈՒ հրամանատարության նկատմամբ: Յուրաքանչյուր զորահավաք պահանջում է հատուկ հարցի համար գումարված խորհրդարանի որոշում: Վերջինիս հեռահար ռազմավարությունը ևս մշակվում է խորհրդարանի կողմից[33]:

Այսինքն՝ Շվեյցարիայում համաժողովրդավարական իրական վերահսկողություն է սահմանված, քաղաքացիները զգում են, որ իրենք են բանակի գործունեության իրական պատասխանատուները:

[33] Տե՛ս նույն տեղում, էջ 40-41:

Շվեյցարական քաղաքացիական բանակի վրա խորապես ազդել է այդ երկրում արմատավորված քաղաքական մշակույթը: Մինչ օրս զենք կրելու իրավունքը ոչ միայն քաղաքացու ազատության արտահայտությունն է, այլև համարվում է պատվաբեր: Այսօր արդեն քաղաքացիական զինված ուժերի ավանդույթը դարձել է Շվեյցարիայի ազգային ինքնության և նրա քաղաքական մշակույթի անքակտելի մաս:

Շվեյցարիայի ներկայիս սահմանադրությանը հատուկ է ռազմաքաղաքացիական յուրօրինակ բաղադրիչների առկայությունը՝ մի կողմից «կանոնավոր բանակի արգելք», մյուս կողմից՝ «պարտադիր զինվորական ծառայություն»: Իզուր չէ, որ շվեյցարական բանակը հաճախ բնորոշվում է հետևյալ կերպ՝ «բանակ, որը չի պատերազմում»[34]:

Խաղաղ ժամանակ ԶՈՒ հրամանատարության տակ անձնակազմի միայն մի մասն էպրոֆեսիոնալ սպայակազմը, որը մասնագիտական խորհրդատվություն է իրականացնում և ազդեցություն է ունենում հեռահար ռազմական որոշումների կայացման վրա[35]:

Շվեյցարիայի պահեստազորը տարբերվում է եվրոպական կանոնավոր ԶՈՒ-ից: Խաղաղ ժամանակ քաղաքացիները զորակոչվում են միայն ուսումնական նպատակներով: Անձակազմի՝ պահեստազոր տեղափոխման պարտադիր զինվորական ծառայություն գոյություն չունի: 1874 թվականից սկսած՝ յուրաքանչյուր ոք, ով առողջական պատճառներով ազատվում էր ծառայությունից, փոխհատուցման հարկ էր վճարում: Երկրում ոլորտային համագործակցային հավասարազոր բնույթն ընդհանուր առմամբ ենթադրում էր անվստահության վերացմանն ուղղված գործողու-

---

[34] Տե՛ս https://news.rambler.ru/other/42376671-ob-istorii-shveytsarskoy-armii-rasskazhut-v-rayonelefortovo/?fbclid=IwAR1b6c14Fg7slv0_2mp1AIBjUXjGmvRe8qJUMBXX2cDYLhcm8PlgE43SiYQ&updated, հասանելի՝ 18.04.2019:

[35] Տե՛ս **Haltiner K.,** նշվ. աշխ., էջ 40-41:

թյուն և սպաների մասնագիտական պատրաստվածության խթանմանն ուղղված գործընթաց[36]:

Ճիշտ է, բոլոր ծառայողները կամավոր հիմունքներով են անցնում իրենց պարտականությունների կատարմանը, բայց բացի իրենց ազատ կամքի դրսևորումից՝ առանձնակի դերակատարում ունի մասնագիտական պատրաստության աստիճանը: Այն դրսևորվում է՝ ՁՈՒ միացյալ ռազմաուսումնական դասընթացներին մասնակցելով: Շվեյցարիայում զինվորականները մասնակցում են ռազմական պատրաստության դասընթացների՝ հնարավորություն ունենալով մշտապես բարձրացնելու մասնագիտական որակավորումը: Վերոհիշյալ դասընթացները ուսումնական նպատակներ են հետապնդում: Իսկ ռազմական քաղաքականության իրականացման հետազոտական կենտրոնի դերում հանդես է գալիս Գործնական զինվորական ակադեմիան, որը հիմնականում համալրված է մասնագիտական բարձր որակներ ունեցող պաշտոնյաներով: Սովորաբար սա է պատճառը, որ սպաների համար ավելի մեծ տարիքում դժվար է մասնագիտության փոփոխություն իրականացնել:

Ներկայումս զինծառայությունը Շվեյցարիայում բոլորի համար պարտադիր է: Մինչև 2003 թ. բարեփոխումները Եվրոպայում ամենամեծ բանակը Շվեյցարիայինն էր՝ 400000: «Բանակ XXI» բարեփոխման ծրագրի արդյունքում կրճատվեցին զինված ուժերը և համապատասխանեցվեցին XXI դարի պահանջներին՝ ավելացնելով պայմանագրային և մասնագիտական բարձր պատրաստություն ունեցող զինվորների քանակը[37]:

2003 թ. հանրաքվեի արդյունքում բանակի թվաքանակը կրկնակի կրճատվեց՝ ընդհուպ թողնելով 120000 «ակտիվ», 80000

---

[36] Տե՛ս **Haltiner K.,** նշվ. աշխ., էջ 43:

[37] Տե՛ս Armeeleitbild XXI: Konzeption der Schweizerischen Armee zu Beginn des 21. Jahrhunderts, https://www.parlament.ch/centers/documents/de/armee-21-alb-entwurf-d.pdf, հասանելի՝ 06.01.2019:

«պահեստազորային»: 8 մլն բնակչություն ունեցող երկրի համար սա դարձյալ մեծ ցուցանիշ է: Սակայն գործնականում 19-30 տարեկան արական բնակիչները զինվորներ են: Պարզապես նրանք իրենց պարտադիր 260 օրվա ծառայությունը իրականացնում են ոչ թե միանգամից, այլ 10 տարվա կտրվածքով: Մյուս կողմից դա մշտապես զգոն է պահում քաղաքացիներին, քանի որ վերջիններս տարբեր ժամանակահատվածներում կարող են վերապատրաստվելով տարբեր զորամասերում ծառայել[38]:

Արդեն իսկ պատմություն է յուրաքանչյուրի տանը զենք ունենալու իրավունքը: Այժմ զինվորը զենքը ստանում է ծառայության մեջ գտնվելու պահին, այլ ոչ թե բերում է տնից: Պատճառը ծառայողական զենքի միջոցով երկրում տարածված սպանություններն ու ինքնասպանություններն են: Հարկ է նկատել, որ թեև արգելքը կա, բայց դեռևս ոչ բոլորից է հաջողվել զենքը վերցնել: Ներկայումս էլ քաղաքացիների մի մասը օրերն են հաշվում, թե երբ են իրենց հասանելիք ծառայությունը իրականացնելու:

Այսպիսով՝ ընդհանրացնելով բանակաշինության Շվեյցարիայի փորձը՝ գալիս ենք այն եզրահանգմանը, որ դրա ուսումնասիրումը կարևոր է տարբեր երկրների համար բանակի և հասարակության միջև կապի և վերահսկողական մեխանիզմների կատարելագործման տեսանկյունից: Ներկայումս Շվեյցարիան շարունակում է բանակի կատարելագործման լավագույն կառուցակարգերը: Շվեյցարական բանակի հաջողության գրավականներից են ոչ միայն երկրի ոլորտային զարգացման առանձնահատկությունները, այլև մարտական պատրաստության աստիճանն ու բարոյահոգեբանական նկարագիրը: Հայրենասիրության, քաջու-

[38] Տե՛ս Самая милитаризованная страна, http://disszakaz.ru/services/kandidatskaya-dissertatsiya/chto-takoe-dissertatsiya-na-soiskanie-uchenoy-stepeni-kandidata-nauk/?yclid=4106173096615516664, հասանելի՝ 06.01.2019:

թյան և ինքնազոհաբերության խորը զգացումը ժողովրդի մոտ դրսևորվում է դեռևս վաղ հասակից:

Ազգային բանակի գաղափարաքաղաքական սկզբունքներն առավել ցայտուն դրսևորվեցին Ֆրանսիայում Յակոբինյան դիկտատուրայի օրոք:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ
ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱԿԻ ԳԱՂԱՓԱՐԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻՆ ԲՆՈՐՈՇ ԳԾԵՐԸ ՖՐԱՆՍԻԱՅՈՒՄ

Քննելով պատմական ուղին՝ բազմիցս համոզվում ենք, թե որքան ընդհանուր օրինաչափություններ կան անցյալի և արդի փոխակերպվող հասարակություններում տեղի ունեցող իրադարձությունների միջև: Շվեյցարիայի օրինակից զատ՝ պատմությանը հայտնի են այլ նախադեպեր ևս, երբ բանակը համեմատաբար նեղ մասնագիտացված, հասարակության մնացած հատվածից մեկուսացված կառույցից վերածվել է զանգվածային կազմակերպության: Դա, որպես կանոն, տեղի է ունեցել բնակչության լայն շերտերի ուղղակի կամ անուղղակի ներգրավման և համախմբման միջոցով ազգային շահերի պաշտպանության միասնական տեսլականի շուրջ համախմբված հասարակության շնորհիվ: Իսկ կռվի դաշտում հաղթանակ երաշխավորելու համար ռազմական և քաղաքական օրակարգերը ներդաշնակորեն ձուլվել են: Բավական է հիշատակել միայն Ֆրանսիայում Յակոբինյան դիկտատուրայի օրոք «զինվորական համազգեստով պետության» ծնունդը իր հայտնի «ժողովրդական միլիցիայով»[*], կամ էլ թե ինչպես էին «գերմանական յակոբիններ» մականունը ստացած պրուսացի ռեֆորմատորները կրկնօրինակում պետական կարգի ֆրանսիական մոդելը[39]:

1789 թ. ֆրանսիական հեղափոխությունից հետո նոր դասը՝ բուրժուազիան, իշխանությունը վերցրեց իր ձեռքը[40]: Հեղափոխա-

---

[*] Ֆրանսերեն levee en masse բառը համապատասխանում է ժամանակակից ազգային գվարդիային:

[39] Մանրամասն տե՛ս **U. Ben-Eliezer,** «A Nation in Arms: State, Nation and Militarism in Israel» // Comparative Studies in Society and History, vol.37, № 2, 1995, pp. 264–285.

[40] Տե՛ս **Кропоткин П.,** Великая Французская Революция 1789-1793, https://biblio-online.ru/book/velikaya-francuzskaya-revolyuciya-1789-1793-412174:

կան իշխանության նպատակներից մեկը դարձավ այնպիսի բանակի ստեղծումը, որը կպաշտպաներ նոր հասարակական-քաղաքական կարգը: Բուրժուազիան, դեմ գնալով ֆեոդալական-բացարձակապետական կարգերին, հեղափոխության սկզբից ևեթ քայլեր ձեռնարկեց, որպեսզի բանակը չմնա այդ հասարակարգի ներկայացուցիչների ձեռքում, ուստի թագավորական իշխանության դեմ մղված պայքարի կարևորագույն փուլերից մեկը հռչակվեց բանակի նկատմամբ վերահսկողության հաստատումը[41]:

Մինչհեղափոխական ֆրանսիական բանակը կազմակերպված էր այնպես, ինչպես այդ ժամանակաշրջանի եվրոպական բոլոր բանակները: Այն կանոնավոր և մշտական բանակ էր, բայց ոչ երբեք ազգային, ժողովրդական[42]:

Նախքան հեղափոխությունը Ֆրանսիայում թագավորական բանակի թիվը կազմում էր շուրջ 172.000: Բանակի հիմնական ուժը կանոնավոր գնդերն էին, որոնք ձևավորվում էին հավաքագրման ճանապարհով: Սկզբունքորեն դրանք կամավորներից էին բաղկացած, սակայն իրականում այդ կամավորներով զբաղվում էին հատուկ մասնագետները՝ հավաքագրողները (ֆրանս.՝ racoleurs): Զինվորները հիմնականում գյուղացիներ և քաղաքի աղքատ երիտասարդներ էին, որոնք որոշակի զբաղմունք և աշխատանք չունեին: Փոքր թիվ չէին կազմում նաև թափառաշրջիկները ու հանցագործները, որոնց երբեմն ստիպում էին բանակում ծառայելու պարտավորագիր ստորագրել անսթափ վիճակում[43]: Իհարկե, խիստ կարգապահության և ծանր պատիժների պայ-

---

[41] Տե՛ս **Буковецкая М.,** Борьба якобинцев за создаие революционной армии Франции, http://istmat.info/files/uploads/30221/fr_army_m-a-bukovetzkaya_jmh_1939.pdf, հասանելի՝ 10.11.2018:

[42] Տե՛ս «Военная литература» Военная мысль, Глава девятая Развитие постоянных армий, http://militera.lib.ru/science/svechin2a/09.html, հասանելի՝ 25.12.2018:

[43] Французская армия старого режима, տե՛ս https://harmfulgrumpy.livejournal.com/1088707.html?fbclid=IwAR2r6parJgl1g6LyhHyzM86Z9HkLr8rA0mqwNOYlW5MeVghI3nLclRL7UOM, հասանելի՝ 21.05.2019:

մաններում այդ մարդիկ աստիճանաբար վերածվում էին զինվորների: Սակայն վերջիններիս՝ հայրենիքին ծառայելու գիտակցումը ոչ այնքան բարձր մակարդակի վրա էր:

Պալատական հավաքագրողները շրջում էին ողջ Ֆրանսիայով և զինվորներ հավաքագրում, որոնց հետ 7-8 տարով պայմանագրեր էին կնքվում: Կամավորների մեծ մասը ֆրանսիացիներ էին, չնայած որ բանակում ազգային սկզբունքին նշանակություն չէր տրվում: Բանակի կազմում նաև, այսպես կոչված, «արտասահմանյան գնդեր» կային, որոնք համալրված էին հիմնականում շվեյցարացիներով և գերմանացիներով: Հավաքագրում տեղի էր ունենում նաև Ֆրանսիայի սահմաններից դուրս՝ օտարերկրացիների շրջանում[44]:

Ասվածից պարզ է, որ բանակում գաղափարական մոտիվացիա չկար. զինվորը կռվում էր ոչ թե հանուն հայրենիքի պաշտպանության, այլ գումարը տրամադրողի շահերի: Բացի դրանից, հեղափոխությանը նախորդող վերջին տարիներին Ֆրանսիայում զինծառայողների վարձատրությունը չափազանց վատ պայմաններով էր իրականացվում՝ պայմանավորված երկրի ֆինանսական ծանր վիճակով: Փոխարենը բարձրագույն հրամանատարական կազմի վարձատրումը հսկայական գումարներ էր պահանջում*:

Հրամանատարական կազմը՝ լեյտենանտից մինչև գեներալ, օտարված էր զինվորներից. գեներալիտետը գրեթե ամբողջությամբ բաղկացած էր ազնվականությունից, որը պալատական լայն կապեր ուներ, իսկ սպայական պաշտոնները վաճառվում ու գնվում էին ազնվական ծագում ունեցող անձանց կողմից և պայմանավորված չէին դրանք ստացողների արժանիքներով: Զորա-

---

[44] Տե՛ս նույն տեղում:

* 1789 թ. Գլխավոր շտաբը բաղկացած էր Ֆրանսիայի մարշալներից, 202 գեներալ-լեյտենանտներից և 644 դաշտային մարշալներից:

միավորումները կարծես պալատական սպաների «սեփականությունը» լինեին: Զինծառայողը կոչման բարձրացման հավակնություն չէր կարող ունենալ, իսկ ամենաբարձր կոչումը, որին նա հնարավորություն ուներ արժանանալու, ենթասպայի կոչումն էր[45]:

Մինչ իր անկման նախօրյակը Լյուդովիկոս XVI-ի իշխանությունը բանակի հրամանատարական բոլոր պաշտոններն իր ենթակայության տակ էր պահում: 1781 թ. անգամ հրահանգ էր տրվել սպայական պաշտոններ շնորհելու միայն այն անձանց, որոնց ազնվական ծագումը կասկած չէր հարուցում[46]: Այս ամենի նպատակը թագավորին հավատարիմ բանակ ունենալն էր:

Ինչպես տեսնում ենք, բանակը ամբողջությամբ ավատատիրական տարրեր էր պարունակում գուցե ավելի, քան պետական ապարատի այլ ինստիտուտները և հասարակությունը: Բնականաբար, բանակի նման կառուցվածքը չէր կարող դժգոհություններին առիթ չհանդիսանալ: Դեռևս Լյուդովիկոս XIV-ի օրոք լավագույն ռազմական նախարարները քաջ գիտակցում էին զինված ուժերի նման համակարգի թերությունները և որոշ բարեփոխումներ իրականացնում, սակայն դրա երկու գլխավոր «չարիքները»՝ հավաքագրումն ու անհավասարությունը, նրանք վերացնել չէին կարող[47]: Անշուշտ, այդ բարեփոխումների շնորհիվ բանակի տեխնիկական հագեցվածությունը մեծացել էր, այն դարձել էր ավելի խիզախ, սակայն վերջինիս բարոյական ուժն ու հայրենասիրական ոգին դեռևս թույլ էին: XVII դարում հաստատված այս կար-

---

[45] Տե՛ս Кризис «старого порядка»: Великая Французская революция и ее последствия, https://m.studme.org/300970/istoriya/krizis_starogo_poryadka_velikaya_frantsuzskaya_revolyutsiya_posledstviya?fbclid=IwAR10rUYBu5wffHoyGPig6vzYrfRQOxl55Xvckk3ftx1iydeeFrVsw07-8UQ, հասանելի՝12.02.2019:

[46] Տե՛ս **Буковецкая М.,** Борьба якобинцев за создаие революционной армии Франции, http://istmat.info/files/uploads/30221/fr_army_m-a-bukovetzkaya_jmh_1939.pdf, հասանելի՝12.02.2019:

[47] Տե՛ս «Военная Литература» Военная мысль, Глава девятая Развитие постоянных армий, http://militera.lib.ru/science/svechin2a/09.html, հասանելի՝ 12.02.2019:

գերը առանց լուրջ փոփոխությունների շարունակվեցին մինչև հեղափոխությունը՝ ֆրանսիական ազգային բանակի ստեղծումը:

Հեղափոխության առաջին իսկ օրերից թե՛ թագավորական իշխանության, թե՛ բուրժուազիայի համար անչափ կարևոր էր բանակի դիրքորոշումը[48]: Առանցքային նշանակություն ուներ, թե ում կողմը կանցներ բանակը՝ Լյուդովիկոս XVI-ի իշխանությա՞ն, թե՞, ինչպես այն ժամանակ էին ասում, «ազգի ներկայացուցիչների»:

Պալատական սպայակազմը ակնհայտորեն իր համակրանքն էր արտահայտում միապետության և ատելությունը հեղափոխության նկատմամբ[49]: Այդ ատելությունը տարածվում էր նաև շարքային զինվորների վրա: Սպաները զինվորների շրջանում ակտիվ քարոզչություն էին իրականացնում և փորձում պարզել թագավորի նկատմամբ նրանց հավատարմությունը: Սահմանադիր ժողովի կենտրոնական դեմքերը ևս գիտակցում էին ռազմական ոլորտի ժողովրդավարացման վտանգները: Ինչպես նշում էր ռազմական նախարար Լատուր դյու Պենը, նման բանակն ի վերջո կուլ է տալու կայսրությունը[50]: Սահմանադիր ժողովում նա հայտարարում էր. «Թագավորության հեղինակությունը գնալով ավելի է ընկնում, պետք է օգնել նրան կանխել ռազմական ուժերի ադեկվատ վախճանը[51]»: Այսպիսով՝ թագավորական իշխանության

---

[48] Տե՛ս **Войтиков С.,** Армия и власть, глава 2, «Все силы и средства Социалистической республики…», Бонапартистские идеи Троцкого и их практическое воплощение, 1918 г., էջ 211:

[49] Տե՛ս **Соколов Н.,** История Франции на рубеже XVIII-XIX вв., Томск, 2007, էջ 17-18:

[50] Տե՛ս **Моруа А.,** История Франции, https://www.twirpx.com/file/1235510/, https://books.google.am/books?id=8pzMDQAAQBAJ&pg=PT431&lpg=PT431&dq=%D0%9B%D0%B0%D1%82%D1%83%D1%80+%D0%B4%D1%8E+%D0%9F%D0%B5%D0%BD+%, հասանելի՝ 12.03.2019:

[51] **Буковецкая М.,** Борьба якобинцев за создаие революционной армии Франции, http://istmat.info/files/uploads/30221/fr_army_m-a-bukovetzkaya_jmh_1939.pdf, հասանելի՝ 10.12.2018:

կողմնակիցներին հետաքրքրում էր ոչ թե հավատարմությունը հայրենիքի, այլ պետության ղեկավարի նկատմամբ:

Ինչպես ցույց տվեց իրադարձությունների հետագա ընթացքը, հին կարգերի պահպանման կողմնակիցների ջանքերը չիրականացան, քանի որ զինվորները հրաժարվեցին ենթարկվել թագավորին և անցան հեղափոխության կողմը: Նյութապաշտական մոտիվացիային փոխարինեց գաղափարականը: Բանակի միջոցով հեղափոխությունը տապալելու Լյուդովիկոս XVI-ի փորձերը ձախողվեցին: Արժանապատվության, ազատության, համերաշխության և ազգային միասնության հեղափոխական գաղափարներով ոգեշնչված՝ զինվորներն ապստամբեցին հրամանատարական կազմի դեմ և սպաներին վտարեցին զորագնդերից:

1789 թ. Փարիզում, իսկ այնուհետև այլ քաղաքներում ևս ձևավորվեցին ազգային հեղափոխական գվարդիաներ: Ի սկզբանե ենթադրվում էր, որ դրանք պետք է բաղկացած լինեն միայն բուրժուազիայից, սակայն ձևավորումից ի վեր դրանց կազմում փաստացիորեն ներգրավվեցին բանակային միավորումներից ինքնակամ հեռացած բազմաթիվ զինվորականներ: Դեկտեմբերի 12-ին Սահմանադիր ժողովի պատգամավորներից մեկը՝ Դյուբուա դե Կրանսեն իր ելույթում նշում էր. «Ես աքսիոմա եմ համարում, որ Ֆրանսիայում յուրաքանչյուր քաղաքացի պետք է զինվոր լինի, և յուրաքանչյուր զինվոր լինի քաղաքացի, հակառակ դեպքում մենք երբեք Սահմանադրություն չենք ունենա»: Սրանով նա հնչեցնում էր «ազգ-բանակ» գաղափարի առանցքային դրույթներից մեկը, իսկ սահմանադրություն ասելով՝ նկատի ուներ ազգային անկախ պետությունը[52]:

---

[52] **Кондрашов А. П.,** Формула успеха. Настольная книга лидера для достижения вершины, https://www.litres.ru/anatoliy-kondrashov/formula-uspeha-nastolnaya-kniga-lidera-dlya-dostizheniya-vershiny/, հասանելի՝ 19.10.2018:

1791 թվականից սկսած՝ հեղափոխական Ֆրանսիան ստիպված էր պայքար մղել ոչ միայն ներքին, այլև արտաքին սպառնալիքի՝ ֆեոդալական Եվրոպայի դեմ (պատերազմ, որին վիճակված էր գրեթե առանց ընդմիջման ձգվել մինչև 1815 թվականը): Ֆրանսիան միաժամանակ պատերազմում էր Անգլիայի, Բելգիայի, Հոլանդիայի, Իսպանիայի, Գերմանիայի հետ: Հաղթանակի և պատերազմի հաջող ելքի համար անհրաժեշտ էին բոլոր ուժերի գերլարումն ու համախմբումը և երկրում կոնտրհեղափոխության ամբողջական ոչնչացումը: Սակայն ֆրանսիական բանակը գտնվում էր ծանր կացության մեջ. շուրջ 2000 սպա արտագաղթել էր երկրից, ինչի արդյունքում վատթարացել էր հրամանատարական կազմի դրությունը: Յակոբինյան ակումբում Մ. Ռոբեսպիերը հայտարարեց, որ զինվորներն արդարացիորեն չեն վստահում հին հրամանատարական կազմին. «Երկրում ազնվականությունը ոչնչացված է, բայց այն շարունակում է մնալ բանակում, անթույլատրելի է վերջինիս վստահել Ֆրանսիայի պաշտպանությունը[53]»:

Իրոք, ավատատիրական հոգեբանություն ունեցող սպաները դժվար վեր դասեին ազգային շահը: Որքան պատերազմը շարունակվում էր, այնքան ավելի ակնհայտ էր դառնում նոր՝ ազգային բանակի ստեղծման և նախկին թագավորական բանակի վերացման անհրաժեշտությունը. թագավորի շահերը ներկայացնող բանակը չէր կարող պաշտպանել Ֆրանսիան: Ի վերջո նախկին ազնվական դասի ներկայացուցիչների համար ծառայությունը միայն եկամտի աղբյուր էր և անձնական նվիրում թագավորին. դրա հիմքում գաղափարական հենարան չկար: Այդ պատճառով էլ 1791-1792 թթ. Ֆրանսիայում կանոնավոր գնդերի և ազգային գվարդիաների հետ մեկտեղ ձևավորվեցին կամավորական գումարտակները, որոնք հետագայում մեծ դերակատարություն ունե-

[53] Aulard. La cociete des Jacobins, т. II. Заседание 8 июня, 1791.

ցան: «Ազգային կամավորական գումարտակները» հավաքագրվում էին արտաքին սպառնալիքին դիմակայելու համար և ի տարբերություն ազգային գվարդիայի՝ այլ նպատակ էին հետապնդում: Եթե գվարդիան պետք է մնար տեղերում և ապահովեր ներքին կարգն ու անվտանգությունը, ապա կամավորների գումարտակները նախատեսված էին պաշտպանելու պետությունը պատերազմի պարագայում[54]:

Ժողովրդավարական սկզբունքներ կիրառելու տեսանկյունից յուրաքանչյուր գումարտակ իր շարքերից ընտրում էր սպաների և ենթասպաների: Ինչպես տեսնում ենք, այստեղ կիրառվում էին հեղափոխական մեթոդներ. զինվորական կոչումները պայմանավորված էին ոչ թե դրանք ստացողների սոցիալական դիրքով, այլ սպաների գաղափարական մոտիվներով: Այսպես, կամավորները մեկ տարով պայմանագիր էին կնքում: Ինչպես կանոնավոր բանակի զինվորները, այնպես էլ նրանք աշխատավարձ էին ստանում: Շուտով նոր գումարտակներում կամավորների ներգրավվումը սկսեց զանգվածային բնույթ կրել: Ի սկզբանե ենթադրվում էր, որ կամավորական գումարտակներում, ինչպեսև ազգային գվարդիայում, պետք է ծառայեն «ակտիվ» քաղաքացիները: Սակայն իշխանությունները ստիպված եղան հրաժարվել այդ սահմանափակումից: «Պասիվ» և աղքատ հայրենասերները դժգոհում էին, որ իրենց թույլատրվում էր ծառայել միայն գծային զորամասերում որպես վարձկաններ և պրոֆեսիոնալ զինվորներ: Նրանք կամավորական գումարտակներում ներգրավելու թույլտվություն էին պահանջում: Զինվորագրման մղումը պայմանավորված էր ոչ միայն քաղաքացիների՝ ազատ հայրենիքը պաշտպանելու, այլև հեղափոխության գաղափարները Եվրոպայի ժողովուրդների հա-

[54] Конституция 1793 года, տե՛ս http://www.bibliotekar.ru/istoriya-gosudarstva-i-prava-3/66.htm?fbclid=IwAR0mXEydTOFelw52Uy-atNy94X8-hCWDZLj_2rTDppyOSE6n6hC0hMxPE_, հասանելի՝ 12.02.2019:

մար մատչելի դարձնելու ձգտումով: Այսպես, բուրժուական օրենսդիրների կամքին հակառակ, հեղափոխական բանակի նոր կադրեր էին ձևավորվում, որոնք հիմնականում սոցիալական սանդղակի ստորին օղակներից էին բաղկացած: Այս պատերազմը էականորեն տարբերվում էր մյուսներից. այն այլ կերպ էր վարվում, քանի որ դրա գլխավորողը ոչ թե թագավորն էր, այլ ողջ զինված ժողովուրդը: Այսպիսով՝ ծագեց նոր պատերազմի գաղափար՝ ժողովրդական պատերազմ ընդդեմ միապետական Եվրոպայի վարձկան բանակների: Սակայն, ինչպես արդեն նշեցինք, ֆրանսիական ժողովրդական բանակը գտնվում էր ներքին ճգնաժամային ծանր պայմաններում. կազմակերպչական թուլության պատճառով Ավստրիայի դեմ պատերազմը հեղափոխական Ֆրանսիայի համար անհաջող սկիզբ ունեցավ: Սպասված հաղթանակի փոխարեն բանակը նահանջ ապրեց: Զինվորականների շրջանում համընդհանուր խուճապ էր, ինչի արդյունքում բազմաթիվ գեներալներ հրաժարականներ տվեցին: Այդ հրաժարականները յակոբինյանների կողմից դիտվում էին որպես դավաճանություն հայրենիքի և հեղափոխության նկատմամբ: Նրանք նշում էին. «Հայտարարված է պատերազմ, մեր կամավորները սահմանին են, հազարավոր քաղաքացիներ պատրաստ են օգնության գալ մեզ: Սակայն միևնույն ժամանակ գեներալներն անգործության են մատնված: Նրանցից ոմանք ամենավտանգավոր պահին մտադիր են հրաժարական տալ, պետության ներսում դավաճանություն է բույն դրել[55]»:

1792 թվականի աշնանից սկսած՝ բանակի, անգամ փարիզյան գումարտակների ռազմական մատակարարումը ավելի էր վատանում: Մեկ անձի համար ընդամենը 2 գնդակ էր նախատես-

[55] Տե՛ս Конституция 1793 года, տե՛ս http://www.bibliotekar.ru/istoriya-gosudarstva-i-prava-3/66.htm?fbclid=IwAR0mXEydTOFelw52Uy-atNy94X8-hCWDZLj_2rTDppyOSE6n6h C0hMxPE_, հասանելի՝ 12.02.2019:

ված: Դաշտային հոսպիտալները սարսափելի վիճակում էին գտնվում: Հիվանդ և վիրավոր զինվորները մնում էին մարտադաշտում: Բացի դրանից՝ ռազմական նախարարության գրասենյակը և պահեստները ոչ կոմպետենտ մարդկանց իրավասության տակ էին: Թվում էր, թե բանակը ոչնչացված է, սակայն անվստահության մթնոլորտը շուտով չքացավ: Հայրենասիրության պոռթկումը, ինչպես նաև հեղափոխության պարտության վտանգը զինվորներին մղեցին ռազմաճակատ: Նրանք, ովքեր առաջնագիծ չէին ուղարկվում, բողոքում էին: Զինվորներն արդեն աչքի էին ընկնում սառնասրտությամբ և վստահությամբ: Ինքնագիտակցության բարձրացման շնորհիվ աստիճանաբար վերականգնվում էր կարգուկանոնը, դասալքությունը գրեթե վերացել էր: Որքան էլ զարմանալի է, չնայած չափազանց անբարենպաստ հանգամանքներին՝ որոշ հրամանատարների դավաճանության դեպքերին, վատ մատակարարմանը, կենտրոնից թույլ ղեկավարմանը՝ կանոնավոր ստորաբաժանումների զինվորները, կամավորները տոգորված էին հեղափոխական խանդավառությամբ: Նրանք համարձակորեն հարձակման էին անցնում, իսկ պաշտպանության ժամանակ համառ դիմադրություն էին ցույց տալիս թշնամուն:

Մեծ նշանակություն ուներ այն հանգամանքը, որ հրամանատարական կազմը համալրված էր արդեն բուրժուա-ժողովրդական դասի ներկայացուցիչներից, որոնք անկեղծորեն պատրաստ էին պաշտպանել իրենց հայրենիքը և հեղափոխությունը: Փոփոխություններ էին տեղի ունեցել նաև հրամանատարական կազմում. այն ժողովրդավարացվել էր: Մասնավորապես կրտսեր և միջին հրամանատարական կազմի խիստ կարիք ունեցող բանակը պատերազմի առաջին իսկ ամիսներից համալրվել էր բանիմաց և համոզմունքների տեր կադրերով:

Լուծված էր նաև կարգապահության հարցը: Կարգապահությունը հռչակվել էր որպես կոնտրհեղափոխության և արտաքին թշնամու դեմ հաջող պայքարի անհրաժեշտ պայման:

Միևնույն ժամանակ Կոնվենտը բանակի անձնակազմը դիտում էր որպես երկրի քաղաքական կյանքին մասնակցող քաղաքացիների: Մեծ կարևորություն էր տրվում բանակի քաղաքական դաստիարակության հարցին: Այն անգամ ներգրավված էր 1793 թ. Յակոբինյան Սահմանադրության քննարկման աշխատանքներին: Հասարակական փրկության կոմիտեն բոլոր զորամիավորումներին Սահմանադրության նախագծի օրինակներ և հայրենասիրական թերթեր էր ուղարկում: Բացի դրանից՝ Յակոբինյան ակումբը հատուկ տեղեկագրեր էր ուղարկում, որի միջոցով զինվորներն իրազեկվում էին երկրին վերաբերող կարևորագույն իրադարձությունների մասին:

Նախկինում բանակում գերիշխող սոցիալական ստրատիֆիկացիան մեղմելու և երկրի պաշտպանությունն ապահովելու գործում ներգրավված էին բոլոր խավերը: Ասվածի համատեքստում հետաքրքրական է Լ. Ա. Սեն-Ժյուստի հայտնի հրամանը. «Բանակի և աղքատ բնակչության կարիքները հոգալու համար հարուստները պարտավոր են 9 միլիոն ֆրանկ հատկացնել: 10.000 զինվորներ ոտաբոբիկ են: Տեղեկացրե՛ք Ստրասբուրգի բոլոր ազնվականներին, որ վաղը ժամը 10:00-ին վիրավոր զինվորների համար 10.000 երկարաճիտ կոշիկ և 2000 մահճակալ պետք է ուղարկվի[56]»:

Հատկանշական է մի դիպված նս. հրամանատարներից մեկը հայտնել էր, որ ստորաբաժանումներից մեկի զինվորները ծղոտներից են իրենց համար կոշիկ պատրաստում: Սա պատճառ դար-

[56] Տե՛ս Черноверская Т. А., Жизнь и деятельность Луи Антуана Сен-Жюста (1767-1794), № 6, 2002, տե՛ս http://vivovoco.astronet.ru/vv/papers/ecce/st-just.htm?fbclid=iwar0an3z5pv6btoegtgrgq1cygf1wzt7k2lyfoislfd4ptj483ykvqodfzxk, հասանելի՝ 06.01.2019:

ձավ, որ կիսասոված, վատ հագնված աշխատավորները անխոնջ աշխատեին՝ գիտակցելով, որ իրենցից է կախված հեղափոխության փրկությունը: Ամենուրեք արհեստանոցներ էին կառուցվում եկեղեցիներում, մենաստաններում, անգամ փախստականների համար նախատեսված կացարաններում: Փարիզի, ինչպես նաև այլ վայրերի կոշկակարանոցները զբաղված էին միայն բանակի համար կոշիկ կարելով: Մինչև 1793 թ. ավարտը արգելված էր մասնավոր պատվերների ընդունումը: Փարիզում այդ ժամանակից ի վեր նորաձև դարձավ փայտե կոշիկներ՝ «սաբոներ» կրելը, որպեսզի Հասարակական փրկության կոմիտեն կարողանար բանակի համար կաշվի պահուստ հավաքել: Սակայն միայն հեղափոխական էնտուզիազմը և հայրենասիրական պաթոսը քիչ էին իսկական բանակ ստեղծելու համար: Անհրաժեշտ էր կարգուկանոնի և կարգապահության մթնոլորտը ուժեղացնել: Դրա համար կարևորվում էր փորձառու սպաների և ենթասպաների առկայությունը: Բարեբախտաբար, հին կանոնավոր բանակը, չնայած արտագաղթին, պահպանել էր բավարար պահոց: 1793 թ. փետրվարին Կոնվենտում բանակի վերակազմակերպման հարց բարձրացվեց: Առաջարկվեց կամավորների գումարտակները ամբողջովին միաձուլել գծային զորամիավորումների հետ, ինչը ստացավ «ամալգամա» անվանումը: «Ամալգամայի» մասին հռչակագիրը փետրվարի 26-ին ընդունվեց Կոնվենտի կողմից: Բնականաբար, սա սկզբում հանգեցրեց որոշ բարդությունների, մասնավորապես սկզբում «հների» և «նորերի» միջև բախումներ էին տեղի ունենում, սակայն հաջող քաղաքականության շնորհիվ 1794 թ. արդեն ֆրանսիական բանակը վերածվեց մեկ միասնական ամբողջության: Հռչակագիրը ոչնչացրեց կամավորական գումարտակների և կանոնավոր զորքերի միջև առկա բոլոր տարբերություններն ու հակասությունները[57]:

[57] Տե՛ս Советская историческая энциклопедия, “АМАЛЬГАМА”, https://dic.acade

Ֆրանսիային սպառնացող արտաքին վտանգը հարկադրեց Կոնվենտին համընդհանուր աշխարհազորի հրաման տալ: Հասարակական փրկության կոմիտեն* Կոնվենտին ներկայացրեց ողջ ժողովրդին ուղղված կոչի տեքստը, որում մասնավորապես ասվում էր. «Ի զեն ֆրանսիացինե՛ր: Ի զեն: Մեկ մարդու նման բոլորս ոտքի: Ազատությունը բոլոր նրանց, ովքեր հավատարմության երդում են տվել նրան, կանչում է իրեն պաշտպանելու»: Կոնվենտը, լսելով հասարակական կոմիտեի առաջարկը, այն դրեց «Համազգային աշխարհազորի մասին» հրամանագրի հիմքում:

Հրամանագրի էությունը հետևյալն էր. քանի դեռ թշնամին չի վտարվել հանրապետության տարածքից, բոլոր ֆրանսիացիները պետք է մնային մշտական համախմբման վիճակում: Զինվորական ծառայության կանչվածներից ոչ ոք իրավունք չուներ իրեն փոխարինելու այլ անձով. երիտասարդները առաջին անգամ էին գնում կռվի, ամուսնացած տղամարդիկ զենք էին պատրաստում, կանայք հագուստ էին կարում և վիրավորներին խնամում: Զարմանալի չէ, որ 1793 թ. վերջին արդեն ֆրանսիական բանակի թիվը հասնում էր 642 հազարի:

Օգոստոսի 10-ին հանդիսավոր կերպով հրապարակվեցին ժողովրդական քվեարկության արդյունքները: Նոր ընդունված Սահմանադրությունը հռչակում էր, որ յուրաքանչյուր ֆրանսիացի հայրենիքի պաշտպան է: Ողջ ժողովուրդը բռնկված էր անսահման հեղափոխական խանդավառությամբ: Բոլորը պատերազմը

---

mic.ru/dic.nsf/sie/602/%D0%90%D0%9C%D0%90%D0%9B%D0%AC%D0%93%D0%90%D0%9C%D0%90?fbclid=IwAR3fWcyHpNrru4zuMjjML8yv2ooyr9xW_xeNfBB7bGlPOv_Zo_pLEaRIvRY, հասանելի՝ 18.05. 2019:

* Հասարակական փրկության կոմիտեն և Կոնվենտը ձեռնամուխ եղան զինված ուժերում կարգապահության բարձրացմանը: Հասարակական փրկության կոմիտե (ֆր.՝ Comité de salut public) – ֆրանսիական հեղափոխության ժամանակաշրջանում յակոբինյան վարչակարգի ղեկավար մարմին: Ստեղծվել է 1793 թ. ապրիլի 6-ին: Նրան հանձնարարված էր հետևել նախարարների գործունեությանը, արտակարգ պարագաներում ձեռնարկել պաշտպանական միջոցներ ներքին ու արտաքին թշնամիների դեմ:

համարում էին արդար, պաշտպանողական, և իրականում հենց այդպես էլ կար: Հեղափոխական Ֆրանսիան պաշտպանվում էր հետադիմական միապետական Եվրոպայից: Համաժողովրդական աշխարհազորի գաղափարը բոլորի կողմից դիտվում էր որպես հեղափոխության և արտաքին լրջագույն սպառնալիքներից փրկության միջոց: Դրա մասին միաժամանակ խոսում էին և՛ Յակոբինյան ակումբը, և՛ Հասարակական փրկության կոմիտեն, և՛ Կոնվենտը: Յակոբինյան դիկտատուրան հեղափոխական բանակի ղեկավարումը վստահել էր նոր դեմքերի: Գրեթե բոլոր հրամանատարները մինչև 25 տարեկան երիտասարդներ էին և արդեն գեներալի աստիճան էին ստացել: Տաղանդավոր մարդկանց արագորեն վեր էին բարձրացնում: Նմանատիպ ճակատագիր ունեին ֆրանսիական հեղափոխության տասնյակ գեներալներ:

Այն հսկայական ջանքերը, որոնք գաղափարաքաղաքական համախմբվածության հանգեցրին, չէին կարող չպսակվել հաջողությամբ: Շուտով երկրի հյուսիսային և էլզասյան սահմանները մաքրվեցին թշնամուց: Յուրաքանչյուր հաղթական ճակատամարտ ավելի էր ուժգնացնում ֆրանսիական զորքերի խանդավառությունը:

Պետականության դերակատարությունն առավել վառ արտահայտվեց այն ժամանակ, երբ Ֆրանսիական հանրապետության ներքին կյանքը սարսափելի պատկեր էր ներկայացնում. նման պայմաններում բանակը ֆրանսիացիների կյանքում միակ ուրախալի երևույթն էր: Այս նոր բանակը զարմանալի երևույթ էր: Նույնիսկ կիսահագնված, կիսասոված այն անպարտելի էր, և եվրոպական կոալիցիայի կանոնավոր բանակները կրում էին պարտություն պարտության հետևից: Նրանցից յուրաքանչյուրը պայքարում էր ոչ միայն հայրենիքի, այլև սեփական ազատության և հավասարության համար: Երբեք ֆրանսիական բանակի ոգին այդքան բարձր չէր եղել, որքան 1792-1795 թվականներին: Ինչ-

պես նկարագրում է իր տպավորությունները մարշալ Ժ. Սուլտը, «սպաները անձնազոհության և նվիրվածության իսկական սխրանքներ էին գործում: Ոչ ոք չէր բողոքում աղքատությունից և չէր պատրաստվում հրաժարվել ծառայությունից, որը վերածվել էր միակ զբաղմունքի: Ճուրջբոլորը նույն խանդավառությունն էր, որը հաճախ ստիպում էր ավելին անել, քան պահանջվում էր: Զինվորներն իրենց անձնազոհությամբ չէին զիջում սպաներին: Նրանք գտնվում էին Եվրոպայի ամենահարուստ երկրում, նրանց աչքերի առաջ ամենատարբեր գայթակղություններն էին: Սակայն կարգապահությունը թույլ չէր տալիս ոչ մի խախտում կատարել: Երբեք բանակը չէր եղել այսքան հնազանդ, բայց միևնույն ժամանակ այսքան ոգեշնչված և մարտական»[58]: Անվերջանալի պատերազմը չէր կարող իր բացասական ազդեցությունը չունենալ. որոշ ժամանակ անց բանակի ոգին էականորեն փոխվեց, ինչը պայմանավորված էր մի քանի հանգամանքներով: Կամավորները վերածվել էին իսկական զինվորների. նրանք այլևս տուն վերադառնալու մասին չէին երազում, իսկ պատերազմը համարում էին մշտական գործ: Նախկին հայրենասիրական էնտուզիազմը տեղը զիջել էր ռազմականին, պաշտպանողական «սուրբ» պատերազմը վաղուց արդեն վերածվել էր նվաճողականի: Զինվորների իդեալները ևս փոխվել էին. «Ազատության, հավասարության և եղբայրության» գաղափարներին փոխարինման էին եկել «պատիվը, փառքը և հարստությունը»:

Երբ բանակը պաշտպանականից վերածվեց հարձակողականի, ժողովրդից այլևս պատերազմական գործողություններին համընդհանուր մասնակցություն ակնկալել չէր կարելի: Անհրա-

[58] Տե՛ս Маршалы Наполеона, Сульт Жан де Дье (1769-1851), http://adjudant.ru/fr-march/24.htm?fbclid=IwAR02VRi9tichXc2ieXmBBZnLNSXz2W0Cc-ypHU3LyaP2-N8sgTfxqoq5Etc, հասանելի՝ 30. 05. 2019:

ժեշտություն առաջացավ հստակ սահմանելու զինվորական ծառայության կարգը:

1798 թ. ընդունված օրենքի համաձայն՝ զինվորական ծառայությունը սկզբունքորեն շարունակում էր մնալ համընդհանուր, սակայն Ն. Բոնապարտը սահմանեց փոխարինման և վիճակահանության ընթացակարգեր: Ինչպես արդեն նշել ենք, հեղափոխությունը բանակում վերացրել էր ցանկացած արտոնություն: Սակայն Ն. Բոնապարտի կայսր դառնալով՝ դրանք սկսեցին վերականգնվել: Արդեն իսկ կոնսուլության ժամանակաշրջանում ձևավորվեց հատուկ գվարդիա, որը կայսրության ստեղծումից հետո վերանվանվեց կայսերական գվարդիայի: Այնընտրյալների զորամիավորում էր, որում հայտնվելը մեծագույն պատիվ էր: Այն ավելի բարձր աշխատավարձ և սնունդ էր տրամադրում, քան բանակը:

Փաստորեն՝ բանակում վերականգնվում էին մինչհեղափոխական անհավասարության դրսևորումները: Ն. Բոնապարտը ցանկանում էր զինվորներին զինվորական պատվի գաղափարով ներշնչել, նրանց մեջ նվաճողական շովինիզմ բորբոքել՝ արհամարհանք և ատելություն արմատավորելով այն ամենի նկատմամբ, ինչը ֆրանսիական չէր: Նա օգտվում էր մարդկային թուլություններից. մրցակցություն էր մտցնում յուրաքանչյուր զինվորի մեջ: Իսկ վերջիններիս հետաքրքրում էր կարիերայի առաջընթացը, մյուսներից տարբերվելն ու աչքի ընկնելը: Ն. Բոնապարտը իր գեներալներին գումարներ, հողեր և թոշակներ էր շռայլորեն նվիրում: Ի տարբերություն «Հանրապետական» բանակի՝ սպայական կոչումները և ընդհանրապես բոլոր պաշտոնների ստանձնումը կրկին դարձան նշանակովի. վերականգնվում էին ավատատիրական սկզբունքները: Չնայած այս ամենին՝ բանակում դեռ չէին մարել հեղափոխական պատերազմների հերոսական ժամանակաշրջանի հիշողությունները: Դրանց ազդեցության տակ բանա-

կը ոչ միայն նվաճում էր Եվրոպան, այլև իր հաղթական ճանապարհին ոչնչացնում էր արիստոկրատական կարգերը, և Եվրոպայի համար շարունակում էր մնալ հեղափոխության սկզբունքների կենդանի մարմնավորումը: Ահա այս յուրօրինակ նվաճողական-ժողովրդավարական ոգու մեջ էր ֆրանսիական բանակի հաջողությունների գրավականը: Յենայի ճակատամարտում սպանված գերմանացի սպայի գրպանում գտնված նամակում հետաքրքրական տողեր կան. «Եթե հարցը միայն ֆիզիկական ուժի մեջ լիներ, մենք կհաղթեինք. ֆրանսիացիները ցածրահասակ են, թուլակազմ: Մեկ գերմանացին կարող է դուրս գալ չորս ֆրանսիացու դեմ: Սակայն կռվի դաշտում նրանք դառնում են գերբնական էակներ: Նրանք մոլեգնում են աննկարագրելի կատաղությամբ, որի նշույլն անգամ մեր զինվորների մեջ չկա[59]»: Հատկանշական է այն, որ բանակը ընկալվում էր որպես «ճշմարիտ Ֆրանսիայի» խորհրդանիշ:

1806 թվականից սկսած՝ իրավիճակը փոխվեց: Զինվորների թվաքանակը չէր բավականացնում: Այսպես, զորակոչման ենթակա էին դարձել անգամ առողջական խնդիրներ ունեցողները և միակ արու զավակները: Բանը հասավ նրան, որ ֆրանսիական որոշ գյուղերում մնացել էին միայն ծերունիներ և երեխաներ, իսկ գյուղատնտեսական գործերով զբաղվում էին միայն կանայք:

Նապոլեոն Բոնապարտը բոլոր այն երկրներից, որոնք միացվել էին Ֆրանսիային կամ էլ նրանից կախվածության մեջ էին գտնվում, պահանջում էր օժանդակ ջոկատներ ուղարկել: Այսպիսով՝ ֆրանսիական բանակում կռվում էին մեծ թվով շվեյցարացիների, իտալացիների, իսպանացիների, հանոնվերցների, բավա-

[59] Տե՛ս **Буковецкая М.,** Борьба якобинцев за создаие революционной армии Франции, http://istmat.info/files/uploads/30221/fr_army_m-a-bukovetzkaya_jmh_1939.pdf, հասանելի՝ 10.12.2018:

բացիների, սաքսոնացիների, լեհերի և այլ ազգությունների ջոկատներ:

Այսպիսով՝ 1809 թվականից սկսած՝ ֆրանսիական բանակը կորցրեց իր ազգային դիմագիծը: Անընդմեջ վարվող պատերազմները բանակի ոգին փոփոխության ենթարկեցին: Զինվորներն արդեն խաղաղության և տուն վերադառնալու հույս չունեին: Նրանք գիտեին, որ իրենց վիճակված է մեռնել մարտի դաշտում և մխիթարվում էին միայն թալանով ու հարբեցողությամբ: Կարգապահությունը արագորեն սկսեց անկում ապրել. բնակչությունը փորձում էր ամեն գնով խուսափել ծառայությունից: Ն. Բոնապարտը խիստ պատիժներ էր սահմանում զինծառայությունից խուսափողների համար: Սակայն դա էլ չէր օգնում: 1813 թ. Ֆրանսիայում արդեն շուրջ 80.000 դասալիք կար[60]: Ճիշտ է, 1811-1812 թթ. ֆրանսիական բանակը հսկայական ուժ էր ներկայացնում՝ հպարտ իր անհամար հաղթանակներով, սակայն դա արդեն այն վետերանների փայլուն բանակը չէր, որը հաղթանակել էր Աուսթերլիցում և Յենայում, դա արդեն հեղափոխական շրջանի ազգային բանակը չէր:

[60] Տե՛ս **Н. Бонапарт,** Император революции. Эксмо, էջ 156:

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ
«ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՀԱՄԱԶԳԵՍՏՈՎ ԱԶԳԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ» ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ԻՐԱԳՈՐԾՈՒՄԸ ԻՍՐԱՅԵԼՈՒՄ

Իսրայելի բանակաշինության ավանդույթների ուսումնասիրումը ՀՀ-ի համար առանձնահատուկ կարևորություն է ներկայացնում: Իսրայելի պոտենցիալ հակառակորդները բանակի թվաքանակով գերազանցում են վերջինիս: Այն որևէ ռազմական բլոկի մաս չի կազմում և մինչև 1991 թվականը, բազմիցս գտնվելով պատերազմական իրավիճակներում, չի դիմել արտասահմանյան ուժերի միջամտությանը: Մինչ այդ՝ նախքան Պարսից ծոցի պատերազմը, որին նաև մասնակցություն ունեցան ամերիկացիներ, Իսրայելի պաշտպանական համակարգը հիմնված էր, այսպես կոչված, «առանց ամերիկացի տղաների» սկզբունքի վրա[61]:

Հարց է առաջանում՝ որն է իսրայելական բանակի հաջողության գրավականը, ինչը թույլ է տալիս հավասարակշռություն մտցնել ուժերի հարաբերակցության մեջ և մեղմել հակառակորդների բազմաքանակության գործոնը:

Դեռևս մինչև 1948 թվականը Իսրայել պետության ձևավորումը և իսրայելական բանակի կազմավորումը գործում էին հրեական ռազմականացված մի շարք միավորումներ, որոնցից առաջինը հետագայում իսրայելական բանակի կայացման վրա անուրանալի ազդեցություն գործած «Հագանան»* է: Վերջինս ստեղծվել է

[61]Տե՛ս Официальный сайт Армии обороны Израиля,https://embassies.gov.il/moscow/Departments/Pages/%D0%92%D0%BE%D0%B5%D0%BD%D0%BD%D1%8B%D0%B9%20%D0%BE%D1%82%D0%B4%D0%B5%D0%BB.aspx, հասանելի՝ 14.04.2019:

* **Հագանա** (երբ.՝ «պաշտպանություն») – Պաղեստինում բրիտանական մանդատի ժամանակ 1920-1948 թթ. գործող հրեական ընդհատակյա կազմակերպություն: Բրիտանական իշխանությունները արգելել են Հագանայի գործունեությունը, սակայն դա չէր խանգարում նրա անդամներին կազմակերպել հրեական բնակավայրերի արդյու-

Երուսաղեմում արաբական բողոքի ալիքների բարձրացմանը զուգահեռ իշուվ* հրեական բնակավայրերի անվտանգության ապահովման նպատակով: «Հագանայի» կազմավորման գործում մեծ դերակատարություն է իրականացրել իշուվում իշխող Սոցիալ-սիոնիստական աշխատանքային կուսակցությունը, որն Իսրայելում իր գերակայությունը պահպանել է մինչև 1977 թվականը: Հագանայի ֆինանսական ծախսերի գերակշիռ մասը վճարում էին Միջազգային սիոնիստական շարժման ֆինանսական կառույցները՝ «Հիմնական ֆոնդը» և «Իսրայելի աջակցության ֆոնդը»: Բացի դրանից՝ Պաղեստինի ողջ հրեա բնակչությունը պարտավոր էր համայնքի պաշտպանության և ռազմական ծախսերը հոգալու համար հատուկ հարկ վճարել հրեական ինքնակառավարվող մարմիններին: 1930-ական թթ. վերջին արդեն «Հագանայի» շարքերում հաշվվում էին 25.000 զինյալներ[62]: Մինչև «Հագանան» ապահովում էր համայնքի անվտանգությունը, սիոնիստական ղեկավարությունը ընդհուպ Արաբա-իսրայելական 1-ին պատերազմի տարիները՝ 1948-1949 թթ., Պաղեստինում իրականացրեց գյու-

---

նավետ պաշտպանություն: Հրեական պետության կազմավորման ընթացքում Հագանան դարձել է Իսրայելի պաշտպանության բանակի հիմքը:

* Իշուվ (եբր.՝ բնակեցված վայր, բնակչություն, նաև բնակեցում) – Էրեց Իսրայելի (Պաղեստինի) հրեական բնակչության հավաքական անվանում: «Իշուվ» անվանումը հիմնականում կիրառվում էր մինչև Իսրայելի պետության ստեղծումը: Միջնադարում Մոշե բեն Հակոբը Ղուսիից, Հակոբ Թամը և ուրիշները ռեսպոնսներում «իշուվ» բառով մատնանշում էին միայն գաղթավայրերի փոքր համայնքները: 1882 թվականից հետո Առաջին ալիայում առաջացել է «նոր իշուվ» արտահայտությունը, որով նկատի ունեին առևտրով զբաղվող և հիմնականում աշխարհիկ հայացքներ ունեցող հրեաների մասին: «Նոր իշուվը» հակադրվում էր «հին իշուվին», այսինքն՝ հրեական բնակչության օրթոդոքս զանգվածին, որը հիմնականում ապրում էր հալուկայի (նվիրատվությունների) միջոցով:

[62] Տե՛ս Еврейские военизированные формирования, действовавшие в Палестине до образования Государства Израиль в 1948 г., https://mgimo.ru/upload/iblock/6f6/%D0%95%D0%B2%D1%80%D0%B5%D0%B9%D1%81%D0%BA%D0%B8%D0%B5%20%D0%B2%D0%BE%D0%B5%D0%BD%D0%B8%D0%B7%D0%B8%D1%80%D0%BE%D0%B2%D0%B0%D0%BD%D0%BD%D1%8B%D0%B5%20%D1%84%D0%BE%D1%80%D0%BC%D0%B8%D1%80%D0%BE%D0%B2%D0%B0%D0%B, հասանելի՝ 11.10.2018:

ղատնտեսական և շինարարական աշխատանքների մի ողջ շղթա: Արդյունքում 118 հրեական բնակավայրեր ստեղծվեցին, որոնք ներկայումս գտնվում են Իսրայելի կազմում՝ չնայած այն հանգամանքին, որ նախքան պետության ստեղծումը փաստացիորեն պատկանում էին Պաղեստինում բնակվող արաբներին: Որոշ տվյալների համաձայն՝ մինչև Իսրայելի հռչակումը անլեգալ ճանապարհով Պաղեստին է ուղարկվել շուրջ 75.000 հրեա: Իսրայելի մանդատը ստանձնած Բրիտանական իշխանությունների գործողությունները վերաբնակեցման քաղաքականության նկատմամբ բավականին զուսպ էին, ինչը իշուվի ղեկավարությանը թույլ էր տալիս զենք հավաքագրել: Այս գործողություններին Պաղեստինի արաբները պատասխանում էին մասսայական ընդվզումներ կազմակերպելով: Ծուտով Բրիտանիայի կառավարությունը ստիպված էր արաբներին հանդարտեցնելու քաղաքականություն վարել: 1939թ. մայիսի 17-ին Մեծ Բրիտանիան հրապարակեց «Սպիտակ գիրքը»[63], որը լուրջ զիջումներ էր պարունակում հօգուտ Պաղեստինի արաբական համայնքի: Մասնավորապես սիոնիստական ֆոնդերին արգելվում էր հողատարածքներ գնել Պաղեստինում: Անգլիայի վերոհիշյալ որոշումը Իշուվի ղեկավարությանը Երկրորդ համաշխարհային պատերազմի նախօրեին բարդ իրադրության առջև կանգնեցրեց: 1939թ. Եգիպտոսի տարածքով դեպի Պաղեստին գերմանացիների ներթափանցման վտանգը անգլիական մանդատային իշխանություններին ստիպեց օժանդակել «Հագանայի» շրջանակներում ՊԱԼՄԱԽ հատուկ ստորաբաժանման ստեղծմանը: «Հագանայի» և ՊԱԼՄԱԽ-ի 30000 կամավորներ անգլիական բանակի կազմում մասնակցում էին ռազմական գործողություններին: Նրանցից շատերը պատերազմի տարիներին նաև բրիտանական և ամերիկյան հետախուզության ծա-

[63] Տե՛ս Электронная еврейская энциклопедия, https://eleven.co.il/zionism/from-balfour-to-state/10476/, հասանելի՝ 15.02.2019:

ռայողներ էին: Այսպիսով՝ հրեաները ցույց էին տալիս, որ առանց իրենց Անգլիան չի կարող տարածաշրջանում հուսալի հենարան ունենալ:

Պատերազմի ավարտին լավ կազմակերպված և ռազմարվեստի նրբություններին տիրապետող «Հագանայի» և ՊԱԼՄԱԽ-ի ստորաբաժանումները գտնվում էին ռազմական պատրաստության բարձր մակարդակի վրա, և ինչպես ցույց տվեցին Արաբա-իսրայելական առաջին պատերազմի իրադարձությունները, իսրայելական բանակն ամբողջությամբ համապատասխանում էր հարևան արաբական երկրների զինված ուժերի չափանիշներին: Երկրորդ համաշխարհային պատերազմում կռվի մեծ փորձ ձեռք բերած զինվորները և սպաները կազմեցին ՑԱԽԱԼ-ի ողնաշարը (ՑԱԽԱԼ– Ցվա ա-հագանա լե-էրեց Իսրայել):

«Հագանայի» և ՊԱԼՄԱԽ-ի դպրոցն են անցել հրեա մի շարք հայտնի գեներալներ և քաղաքական գործիչներ, նրանց թվում՝ Իցխակ Ռաբինը, Մոշե Դայանը, Արիել Շարոնը և այլք: «Հագանայի» գլխավոր շտաբի պետի ջանքերի շնորհիվ է ստեղծվել նաև ներկայիս «Մոսսադ» հետախուզական ծառայությունը:

Հաջորդ ռազմականացված միավորումը ԲԵՅՏԱՐ երիտասարդական սիոնիստական կազմակերպությունն է, որը ստեղծվել է 1923 թ. Ռիգայում: Եթե այդ փուլի այլ լիդերների մոտեցման համաձայն՝ սիոնիզմի գլխավոր խնդիրը Պաղեստինը հրեաներով բնակեցնելն էր և այդ տարածքում հրեական պետություն ստեղծելը, ապա նշված կազմակերպության հետևորդների կարծիքով այդ գաղափարների իրագործումը բազմաթիվ թշնամիներ առաջ կբերեր: Ուստի առաջադրված նպատակներին հասնելու համար անհրաժեշտ էր հանգամանորեն պատրաստվել զինված պայքարի:

Ռազմականացված հաջորդ միավորումը ԷՑԵԼ-ն է՝ Ազգային ռազմական միությունը, որը Պաղեստինում գործող ընդհատակյա զինված կազմակերպություն էր: Այդ կազմակերպության նպա-

տակը ևս Իսրայել պետության ստեղծումն էր: Կազմավորվել է 1931 թ. Հագանայի վերակազմակերպման արդյունքում: Բրիտանական իշխանություններն այն համարում էին ահաբեկչական կազմակերպություն, քանի որ վերջինս սպանություններ էր կազմակերպում անգլիացիների և արաբների բնակավայրերում: 1929 թ. արաբների մասսայական հակասիոնիստական բողոքի դրսևորումներից հետո, որին զոհ գնաց շուրջ 100 հրեա, ԷՑԵԼ-ի անդամները սոցիալ-սիոնիստներին և նրանց լիդեր Բ. Գուրիոնին մեղադրեցին անօգնականության և անգործության մեջ: Նրանք գտնում էին, որ հրեական պետությունը կարող է ստեղծվել միայն ուժեղ բանակի առկայության պայմաններում: Ըստ սիոնիզմի և հրեական հանրագիտարանի՝ կազմակերպությունը իրականացրել է 158 ահաբեկչական գործողություն: Իսրայել պետության ստեղծումից անմիջապես հետո նոր ստեղծված Իսրայելի պաշտպանության բանակի գլխավոր շտաբի պետ, գեներալ Ի. Գալիլին և Մ. Բեգինը համաձայնագիր ստորագրեցին և ԷՑԵԼ-ը միացավ իսրայելական բանակին:

Նշված զինված միավորումների առկայությունը փաստում է, որ տարիներ շարունակ Իսրայելը եղել է «զինվորական համազգեստով ազգային պետություն»: Դեռևս նախքան պետականության հաստատումը այնտեղ իրականացվում էին ազգային իղձերի իրագործմանն ուղղված քայլեր, սակայն արտաքին ագրեսիային դիմակայելու ունակ մարտունակ ԶՈՒ ստեղծելու նախագիծը ձևավորվեց ավելի ուշ:

Սկսած 1948 թվականից՝ արդեն իսկ ինքնիշխան պետության հովանու ներքո Իսրայելում սկիզբ առավ մի գործընթաց, որը մեծ մասամբ հայրենադարձներից բաղկացած բնակչությանը վերածեց ոչ թե ազգի, այլ «ռազմականացված ազգի»[64]: Անկախ պե-

[64] Տե՛ս **Ben-Eliezer,** «A Nation in Arms: State, Nation and Militarism in Israel» // Comparative Studies in Society and History, Vol. 37, № 2, 1995.

տականության հռչակումից մեկ տարի անց Իսրայելի առաջին վարչապետ Դ. Բեն-Գուրիոնը նշում էր. «Քանի որ ամեն ինչ կախված է ժողովրդից, մենք ինքներս մեզ պետք է հարց տանք՝ արդյոք մենք ժողովուրդ ենք: Ես պատասխանում եմ՝ մենք դեռ ժողովուրդ չենք: Հրեաները գալիս են տարբեր երկրներից և չունեն ընդհանուր լեզու[65]»: Ըստ Դ. Բեն-Գուրիոնի՝ հենց բանակը պետք է դառնար «սոցիալականացման այն դպրոցը», որը վերակազմավորված ինքնիշխան Իսրայելի՝ տարբեր երկրներից եկած առաջին սերնդի բնակիչներին՝ իրենց հնամենի հողում նոր հասարակություն կառուցած հրեաներին, կվերածեր ժողովրդի: Այդ գործընթացի հաջողությունը երաշխավորելու համար պետությունը ջանքեր չէր խնայում՝ ապահովելով բանակի և հասարակության փոխգործակցությունը հանուն «նոր հրեայի» ինքնության ստեղծման, որը կլիներ ուժեղ, չէր վախենա դժվարություններից՝ ունակ պաշտպանվելու և պաշտպանելու իր երկիրը:

Երկրի ղեկավարությունը գործում էր՝ ելնելով «ազգային անվտանգության» լայն ընկալումից, որը չէր ենթադրում հասարակական կենսագործունեության բոլոր ոլորտների ռազմականացում: «Անվտանգությունը,– ինչպես բացատրում էր Դ. Բեն-Գուրիոնը,– անհնար է ապահովել առանց ներքոհիշյալ բաղադրատարրերի. ազգային անվտանգությունը ենթադրում է վերաբնակեցման քաղաքականություն, ինքնիշխանության հաստատում ոչ միայն պետության ցամաքային, այլև ջրային և օդային տարածությունում. անվտանգությունը տնտեսական անկախությունն է, անվտանգությունը գիտական և հետազոտական աշխատանքի զարգացումն է, արդիական պահանջներին համապատասխան մասնագիտական պատրաստվածությունը, անվտանգությունը երիտասարդական շարժումներն են, որոնց անդամներն ունակ

[65] Տե՛ս Давид Бен-Гурион и история становления государства Израиль, https://jewish.ru/ru/stories/chronicles/4928/, հասանելի՝ 25.11.2018:

կլինեն մասնակցելու ամենաբարդ և վտանգավոր խնդիրների լուծմանը[66]»:

Այսպիսով՝ անվտանգության ապահովումը համակարգային լուծում պահանջող խնդիր է: Այն, ինչ ուղղված է պետության հզորացմանը, ծառայում է բանակի հզորացման գործին:

1950-ական թթ. կեսերին երկրի ղեկավարությունը երկարատև վեճերից հետո սահմանեց Իսրայելի արտաքին քաղաքական կուրսը: Մոշե Շարետը, որը չափավոր խաղաղասիրական մոտեցման կողմնակից էր, հեռացվեց վարչապետի պաշտոնից: Ղեկավարումը դարձյալ իր ձեռքը վերցրեց Դ. Բեն-Գուրիոնը, որը վայելում էր գեներալիտետի լիակատար աջակցությունը: Փոխհատուցման գործողությունները, իսկ այնուհետև Սինայի արշավանքը նոր ռազմաքաղաքական կուրսի «հասունության յուրօրինակ դրսևորումներ էին»: Եվ չնայած պատերազմի ավարտից անմիջապես հետո Սինայի թերակղզուց Իսրայելի հեռանալուն՝ ընդհանուր առմամբ պարզ էր, որ այն հաջողությամբ է պսակել իր առջև դրված խնդիրները:

Բանակ-հասարակություն-պետական իշխանություն փոխգործակցության «Ոսկե դարը» դրսևորվեց վեցօրյա պատերազմից անմիջապես հետո: Հասարակության արագ հաղթանակը, նոր տարածքների գրավումը կարծես «զինվորական համազգեստով ազգային պետության» մոդելի ճշմարտացիության համոզիչ ապացույցը դարձան, որը հանուն ազգային համընդհանուր արժեքների և իդեալների պահանջում էր ուժերի առավելագույն լարում[67]: Ավելին, պատերազմը հրեաների մոտ արմատավորեց և ամրապնդեց այն մոտեցումը, որ նրանք միասնական ժողովուրդ

---

[66] Տե՛ս **Нойбергер Б.,** Национальная безопасность и демократия-конфликты и дилемы: Израиль в сравнительной перспективе, http://online-books.openu.ac.il/russian/democracy-and-national-security/volume1/article1.html, հասանելի՝ 13.12.2018:

[67] Տե՛ս Шестидневная война, https://eleven.co.il/state-of-israel/arab-israeli-conflict/14808/, հասանելի՝ 30.03.2019:

են՝ միավորված ընդհանուր ճակատագրով: Զարմանալի չէ, որ այդ տարիները նշանավորվեցին պետական քաղաքականության վրա ՑԱԽԱԼ-ի Գլխավոր շտաբի ղեկավարների աճող ազդեցությամբ*: Այսպիսով՝ իսրայելական ազգային բանակը բնորոշվում էր մի քանի առանձնահատկություններով.

- Իսրայելում բանակը ազգային ծրագիր էր, որի ուժը ոչ միայն կատարելագործված անձնակազմն էր, այլև այն փաստը, որ այն արտահայտում էր օրեցօր աճող ժողովրդի ոգին, նրա տոկունությունը:
- Այնտեղ բանակի և հասարակության փոխգործակցության յուրօրինակ մոդել էր ձևավորվել: «Ռազմական» և «քաղաքացիական» ոլորտների տարանջատում չկար: «Քաղաքացիական» հասկացությունն անգամ դուրս էր եկել ընդհանուր բառապաշարից: Բանակի և հասարակության միաձուլումը հանգեցրել էր նրան, որ անվտանգության հիմնախնդիրները ներթափանցել էին հասարակական կյանքի ամենատարբեր բնագավառներ. ընդհուպ դրանք հաճախ սոցիալ-քաղաքական տարբեր խնդիրների գնահատման չափանիշների դերում էին հանդես գալիս:
- «Զինվորական համազգեստով ազգային պետության» գոյության պայմաններում բանակը կուսակցականացված չէր, քանի որ պետական նշանակության կառույց էր, որի ուժը հասարակական բոլոր խմբերի և շերտերի ներգրավվածության, ինչպես նաև ֆրակցիոնիզմի բացակայության մեջ էր:
- Ազգային բանակը ապակուսակցականացված էր, բայց ոչ ապաքաղաքականացված, հակառակը, ներքաղաքական կյանքում վերջինիս բացառիկ դերակատարությունը օժտում էր դրան արտաքին քաղաքականության մեջ ազդեցություն ունենալու արտոնությամբ: Այսպիսով՝ բանակի հրամանատարությունը ձայնի

* 1970 թթ. երկրորդ կեսին նշված պաշտոնը հաջորդաբար զբաղեցրել են Մոտա Գուրը և Ռաֆայել Էյտան:

իրավունք էր ստանում այնպիսի արմատական հարցերի քննարկման ժամանակ, ինչպիսիք էին պատերազմը և խաղաղությունը:

- Ռազմականացված Իսրայելը բնորոշվում էր պետական և զինվորական գործիչների համագործակցությամբ, ինչը հաճախ հանգեցնում էր նրան, որ այս ոլորտների միջև գործունեության տարբերակումը դառնում էր ոչ հստակ: Բայց անգամ այն պարագայում, երբ դրանց միջև հստակ սահման էր դրվում, վերնախավերի ներկայացուցիչները գործում էին՝ ելնելով համընդհանուր ջանքերով մշակված տեսլականի տրամաբանությունից: Հիմնավորումը պայմանավորված էր նրանով, որ լայնածավալ տարածաշրջանային խնդիրները կարելի էր լուծել բացառապես ուժային եղանակներով՝ օգտագործելով բանակը:

Այսպիսով, երբ խաղաղության հաստատման նման տարբերակը դառնում է լեգիտիմ և արմատավորվում զանգվածային գիտակցության մեջ՝ դառնալով հասարակական քննարկումների անքակտելի մասը, ակնհայտորեն ժողովուրդը կամ էլ առնվազն դրա ստվար հատվածը ռազմականացվում է. արտաքին քաղաքական հիմնախնդիրների կարգավորման ուժային լուծումները դիտվում են որպես միակ հնարավորը: Իսկ երբ այս աշխարհընկալումը արտացոլվում է պետական մակարդակով ընդունված որոշումներում, խոսքն արդեն ռազմականացված քաղաքականության իրականացման մասին է:

Եգիպտոսի հետ խաղաղ համաձայնագրի կնքումից անմիջապես հետո սկսված Առաջին լիբանանյան պատերազմը վերափոխեց իրադարձությունների ընթացքը: Այն ցույց տվեց, որ Իսրայելի ղեկավարությունը բավարար ազատություն չունի պատերազմ սկսելու որոշում կայացնելու կամ ռազմական գործողությունների ընթացքի վերաբերյալ վերահսկողություն հաստատելու հարցե-

ռում[68]: Տասնամյակներ շարունակ արաբական թշնամական միջավայրի հետ առճակատումը դարձել է հրեական հասարակության ինքնության կարևորագույն առանցքը: Մեծ մասամբ հենց արտաքին սպառնալիքի դեմ հակադրվելու ներքին միասնականությունն է թույլ տվել ամրապնդել հասարակության համերաշխությունը՝ մեղմելով ներքին հակասությունները:

Առաջին լիբանանյան պատերազմից հետո, սակայն, հասարակական սուր քննադատությունների ալիքը կանխելը անհնար դարձավ: Դրա գագաթնակետը շուրջ չորս հարյուր հազարանոց ցույցի անցկացումն էր: Մարդիկ փողոց էին դուրս եկել ի նշան Սաբրայի և Շատիլայի պաղեստինյան փախստականների ճամբարներում Լիբանանի քրիստոնյաների կողմից իրագործված կոտորածների դեմ բողոքի[69]: Հասարակական կյանքում ՑԱԽԱԼ-ի և վերջինիս մասնակցությամբ տեղի ունեցած պատերազմների վերաբերյալ աստիճանաբար ձևավորվեց այլընտրանքային հայեցակարգ: Ընդհուպ հանրային խոսույթում տարածում գտավ «պատերազմ, որից կարելի է խուսափել» (եբրայերեն՝ միլիեմետ բրիրա) արտահայտությունը:

Փաստորեն՝ Իսրայելում «զինվորական համազգեստով ազգի» մոդելը, Առաջին լիբանանյան պատերամից սկսած, տվեց իր առաջին ճեղքերը, ինչի արդյունքում իսրայելական «մոբիլիզացված հասարակությունը» փոփոխությունների ենթարկվեց, որի հիմքում ընկած էին ինչպես ներքին, այնպես էլ արտաքին մի շարք գործոններ, ինչի հետևանքով ժողովրդավարացման համաշխարհային գործընթացներին զուգահեռ տեղի ունեցավ «զինվո-

---

[68]Տե՛ս Первая Ливанская война (1982), https://guide-israel.ru/history/240-pervaya-livanskaya-vojna-1982/, հասանելի՝ 01.05.2019:

[69] Տե՛ս Сабра и Шатила (1982), http://www.ejwiki.org/wiki/%D0%A1%D0%B0%D0%B1%D1%80%D0%B0_%D0%B8_%D0%A8%D0%B0%D1%82%D0%B8%D0%BB%D0%B0_(1982), հասանելի՝ 12.04.2019:

րական համազգեստով պետության» թևակոխում ուժեղ քաղաքացիական հասարակության:

Ներքին գործոններից մեկը, ինչպես արդեն նշեցինք, 1987 թ. բռնկված ինտիֆադան էր: Արդեն իսկ 1980-ական թվականների առաջին կեսերին, երբ ՑԱԽԱԼ-ը գտնվում էր Լիբանանում, իսրայելական հասարակության համար բացահայտվեց, որ համազգային բանակը ունակ չէ հաջողությամբ կատարելու ոստիկանական գործառույթները: Սա նախևառաջ բացատրվում էր նրանով, որ դրա անձնակազմը համալրված էր հասարակության տարբեր շերտերից և հաճախ ենթարկվում էր միմյանց հակասող քաղաքական հրահանգների: Առաջին ինտիֆադան բնորոշվեց նաև զինվորների և սպաների միջև բանավեճերով. շատ զինվորներ իրենց մեջ բարոյական ուժ չէին գտնում իրականացնելու որոշ առաջադրանքներ, որոնց բնույթը անհասկանալի էր՝ ռազմական է, թե ոստիկանական: Այս խնդիրն ի հայտ եկավ պաղեստինցի քաղաքացիական բնակչության հետ առճակատման ժամանակ, որը պայքարում էր հանուն իր պետության ստեղծման:

«Զինվորական համազգեստով ազգային պետությանը» հատուկ օրինաչափություններով պայմանավորված՝ նշված տարաձայնությունները տարածվեցին ողջ հասարակության մեջ և, բնականաբար, չէին կարող իրենց հետքը չթողնել բանակի գործունեության վրա: Ինտիֆադան բացահայտեց արաբական գերակշռող բնակչություն ունեցող տարածքների վերահսկողության խնդրահարույց կողմերը: Այն իսրայելական հասարակությունը պառակտեց պատերազմի և խաղաղության հարցերի վերաբերյալ բազմաթիվ հակասությունների և վեճերի պատճառով:

«Զինվորական համազգեստով ազգային պետության» թուլացման արտաքին գործոնների դերում հանդես եկան Սառը պատերազմի ավարտը և Խորհրդային Միության փլուզումը: Մերձավոր Արևելքը դադարեց լինել այն հարթակներից մեկը, որտեղ եր-

կու գերտերությունները պայքարում էին համաշխարհային գերիշխանություն հաստատելու համար: Չնայած այն հանգամանքին, որ մերձավորարևելյան կոնֆլիկտներն ունեն իրենց սեփական նախապատմությունները, այնուամենայնիվ այս երկու գերտերությունների առճակատումը իր հավելյալ ազդեցությունն էր թողնում խնդիրների սրման վրա: Զարմանալի չէ, որ երբ ԽՍՀՄ-ի և ԱՄՆ-ի միջև պայքարն ավարտվեց, արաբա-իսրայելական արյունալի կոնֆլիկտի մեջ ներգրավված տարածաշրջանի տարբեր երկրներ անգամ խաղաղության համաձայնագրեր ստորագրեցին Իսրայելի հետ: Պարսից ծոցի Առաջին պատերազմից հետո շատ իսրայելցիների համար պարզ դարձավ, որ հրեական պետության ղեկավարությունը հաճախ պետության համար կենսական որոշումների ընդունման ժամանակ թելադրվում էր համաշխարհային քաղաքականության հրամայականներով: Իսրայելը հրթիռակոծվում էր Իրաքի կողմից այն դեպքում, երբ Պարսից ծոցի պատերազմի մասնակից չէր:

Արտաքին գործոններից մեկն էլ համաշխարհային տնտեսական նոր միտումներն էին, որոնք ևս չէին կարող իրենց ազդեցությունը չունենալ Իսրայելի, ինչպես նաև «զինվորական համազգեստով ազգային պետության» մոդելի հետընթացի վրա: ԱՄՆ-ի հետ ազատ առևտրի համաձայնագրի ստորագրումը, 1985 թ. Լիբանանի տարածքի մեծ մասից ՑԱԽԱԼ-ի նահանջը և 1980-ական թթ. կեսերին այդ ժամանակվա ֆինանսների նախարար Իցխակ Մոդայի տնտեսական ծրագրի իրագործումը, որի արդյունքում գնաճի անկում արձանագրվեց, իսրայելական հասարակության մեջ կտրուկ փոփոխությունների առաջացման պատճառ դարձան: Երկրի տնտեսության մեջ ավելի ու ավելի գերիշխող էին դառնում շուկայական միտումները, ինչպես նաև ընդլայնվում և խորանում էին սեփականաշնորհման գործընթացները: Տնտեսական զարգացման հաջորդ գործոնը համաշխարհայնաց-

ման գործընթացներում իսրայելական տնտեսության ինտեգրումն էր: Խաղաղ համաձայնագրերը նպաստեցին արտասահմանյան ներդրումների ընդլայնմանը, իսկ ԽՍՀՄ-ից և ԱՊՀ-ից եկած զանգվածային ներգաղթն իր հետ բերեց մարդկային արժեքավոր կապիտալ: Իսրայելը դարձավ ավելի քիչ կոլեկտիվիստական և սոցիալապես կողմնորոշված, իսկ «զինվորական համազգեստով ազգային պետության» մոդելի փոխարեն ձևավորվեց քաղաքացիական հասարակություն, որտեղ ընդգծվում էին անհատական, անձնական ազատության, ինքնահիրացման, մրցակցության, կյանքի որակի և տնտեսական բարգավաճման արժեքները: Երկարատև պատերազմներից հետո առաջին պլան մղվեցին սոցիալ-տնտեսական և ժողովրդավարացման խնդիրները: Այս ամենի հետևանքով շատ հրեաներ սկսեցին վարել նոր կենսակերպ, որի դրսևորումը Արևմտյան Եվրոպայում սոցիոլոգ Ռ. Ինգլհարթը բնութագրում էր որպես հետմատերիալիստական արժեքների մարմնացում: Նոր հասարակական կազմակերպությունները ուշադրության կենտրոնում դնում են անհատին, նրա իրավունքներն ու ազատությունները, անհատի անձեռնմխելիությունը, գենդերային ինքնահիրացումը: Շատերը սկսեցին ուշադրություն դարձնել կյանքի ձևի և որակի վրա՝ ձգտելով ցանկալի արդյունքների հասնել հասարակակական շարժումների ստեղծմամբ և բողոքի ակցիաներին մասնակցելու միջոցով: Տպավորություն էր ստեղծվում, թե հրեաները կամ էլ առնվազն նրանց մի մասը կարծես հոգնել էին պատերազմի և խաղաղության գլոբալ հարցերից՝ գերադասելով մտածել համայնքային նեղ խնդիրների և իրենց կյանքի մասին: Սա հանգեցրեց նրան, որ այն ոլորտային միտումները, որոնք այդքան բնորոշ էին Իսրայելին անկախ պետականության հռչակումից առաջ, վերածնվել էին՝ դառնալով հասարակական կյանքի ամենաակնառու գծերից մեկը:

1990-ական թթ. սկզբին արաբական պետությունների, ինչպես նաև պաղեստինցիների հետ ձեռք բերված պայմանավորվածության շրջանակներում փորձեր արվեցին այս փոփոխությունները բնորոշելու՝ որպես անցում կենտրոնացված կոլեկտիվիզմից լիբերալ անհատականության: ՅԱԽԱԼ-ը աստիճանաբար պատերազմներին պատրաստվող «ժողովրդական բանակից» փոխակերպվում էր խաղաղ պայմանների համար նախատեսված բանակի: Այդպիսի դատողություններում մասամբ արտահայտվում է Օսլոյի էյֆորիայի ոգին, որը 2000 թ. սեպտեմբերի վերջին՝ երկրորդ ինտիֆադայից սկսած, դարձավ բանակցային գործընթացի նկատմամբ հիասթափության պատճառ*: Փաստորեն՝ պետության առջև ծառացած խնդիրները թելադրում էին, թե որքանով է արդիական «զինվորական համազգեստով ազգային պետության» մոդելը:

Հատկանշական է, որ հակաէտատիստական և հակակոլեկտիվիստական տրամադրությունները առավել բնորոշ էին երիտասարդներին, որոնց անձի զարգացումը տեղի էր ունեցել այն ժամանակ, երբ նրանք լցված էին «Օսլոյի հույսերով»: Երիտասարդությունը, որը հարում էր ձախ ճամբարին, խաղաղության հաստատման հնարավորության մեջ տեսնում էր իր ինքնահիրացման, հասարակության կյանքում ազատության ու դեմոկրատական և քաղաքացիական արժեքների դերի ամրապնդման երաշխիք:

---

* 1993 թ. Իսրայելի և Պաղեստինի ազատության կազմակերպության միջև Նորվեգիայի մայրաքաղաք Օսլոյում կնքվեց խաղաղության համաձայնագիր, որի արդյունքում Հորդանան գետի արևմտյան ափին և Գազայի հատվածում ձևավորվեց Պաղեստինյան ազգային վարչություն (ՊԱՎ): Համաձայնագրով պարտականություններ ստանձնեց նաև ՊԱՎ-ը: Ըստ համաձայնագրի՝ վերջինս պետք է միջոցներ ձեռնարկեր Իսրայելի դեմ զինված հարձակումները կանխելու ուղղությամբ: Համաձայնագրի կնքումը պետք է վերջակետ դներ առաջին ինտիֆադային: Ըստ համաձայնագրի պայմանների՝ ենթադրվում էր, որ հաջորդ հինգ տարում պետք է վերջնականապես լուծվեր արաբա-իսրայելական հակամարտությունը: Սակայն պայմանագիրը այդպես էլ իրականություն չդարձավ: Երկրորդ ինտիֆադայից հետո Օսլոյի բանակցությունները ավելի հաճախ սկսեցին չակերտներով անվանել «խաղաղ»:

Միևնույն ժամանակ Պաղեստինի այս կամ այն տարածքներից Իսրայելի դուրս գալուն վերաբերող բանակցային գործընթացը վերաբնակիչ երիտասարդներին դրեց լուրջ երկընտրանքի առաջ, իսկ պետական քաղաքականությունից հիասթափվելը հանգեցրեց ցուցադրական անհատականության դրսևորումներին և սեփական ուժերով անբաժանելի գաղափարի իրագործմանը:

Իսրայելը ներկայումս գտնվում է նոր դարաշրջանի շեմին: Հաճախ այդ դարաշրջանն անվանում են «հետմոդեռնիստական», որին բնորոշ է ազգային պետության կարգավիճակի նվազեցումը և բանակի գերիշխանության թուլացումը: Այդ փոփոխությունները մի կողմից գլոբալիզացիայի, մյուս կողմից նույն գործընթացների դեմ ուղղված շարժումների հետևանք են: Անգլիացի սոցիոլոգ Է. Գիդդենսի սահմանումը մեծ մասամբ համապատասխանում է իսրայելական ընկալումների իրականությանը, որի համաձայն՝ նոր դարաշրջանին բնորոշ է երկու սկզբունքների՝ կոսմոպոլիտիզմի և ֆունդամենտալիզմի բախումը[70]:

Այսպիսով՝ նկատելի դարձավ, որ «զինվորական համազգեստով ազգային պետության» մոդելը, որի սյուներն էին ուժեղ պետությունը և դրան հավատարիմ համախմբված հասարակությունը, կորցրել է իր բացարձակ բնույթը: Այն շրջանում, երբ Գլխավոր շտաբի պետը Դան Շոմրոնն էր (1987-1991 թթ.), և ավելի մեծ չափով, երբ այդ պաշտոնը զբաղեցրեց Էխուդ Բարաքը (1991-1995 թթ.), ՑԱԽԱԼ-ում տեղի էր ունենում գործընթաց, որին բնորոշ էին հասարակական դերի և դրա իրականացրած գործառույթների կրճատումը: Հենց այս միտումը նկատի ուներ Է. Բարաքը, երբ խոսում էր «փոքր և խելացի» բանակի մասին: 1900-ական թթ. սկզբին, օրինակ, ղեկավարվելով տնտեսական նկատառումներով՝ ՑԱԽԱԼ-ը գերադասեց շատ զորակոչիկների ազատել զին-

[70] **A. Giddens,** Beyond Leftand Right: The Future of Radical Politics, Oxford: Polity Press, 1994 (հրումը տե՛ս **Մանուկյան Ա.,** Քաղաքական ուսմունքները նորագույն ժամանակներում, Ե., 2015, էջ 161-162):

վորական ծառայությունից: Այս մոտեցման շրջանակներում էականորեն կրճատվեց երկիր նոր ներգաղթած աղքատ թաղամասերում ապրող շատ հայրենադարձների, ինչպես նաև աղջիկների զորակոչը: Փաստորեն՝ բոլոր նրանք, ովքեր չէին ցանկանում ծառայել բանակում, չէին զորակոչվում: Արդյունքում ստեղծվել էր մի իրավիճակ, երբ բանակը տասնյոթամյա դեռահասներին հնարավորություն էր տալիս որոշելու՝ կծառայեն արդյոք նրանք բանակում և որտեղ կիրականացնեն իրենց զինվորական ծառայությունը: Բանակը նաև զորակոչիկներին տրամադրում էր հարցաթերթիկներ, որում նրանք պետք է նշեին իրենց առաջիկա զինվորական ծառայության բնույթի վերաբերյալ նախապատվությունները: Այսպիսով՝ զորակոչը վերածվել էր յուրօրինակ «սեփականաշնորհման» և ոտնահարվել էր «զինվորական համազգեստով ազգային պետության» համար այդքան կարևոր «սրբություն» համարվող արժեքը՝ համընդհանուր ներգրավվածությունը ազգային բանակի գործունեության մեջ:

Հասարակության դերի կրճատումը, ի թիվս այլ գործոնների, առաջին հերթին արտահայտվում էր այն բարեփոխումներում, որոնք իրականացվում էին բանակի կողմից և պայմանավորված էին նոր ներգաղթյալների ինտեգրման, նրանց եբրայերեն ուսուցանելու, մշակութային գործունեության, տնտեսական ենթակառուցվածքների զարգացմամբ: Այլ կերպ ասած՝ խաթարվեցին «զինվորական համազգեստով ազգային պետության» մոդելի այն բաղադրիչները, որոնք նախկինում ապահովում էին բանակի և հասարակության միջև սերտ կապը:

ՑԱԽԱԼ-ի գործառության կազմակերպչական նոր հայեցակարգը ոչ այնքան միտված էր բանակի կրճատմանը՝ ելնելով բյուջեն խնայելու նկատառումներից, որքան այն նոր իրողություններին և նոր տիպի պատերազմներին հարմարեցնելուն, որոնց բնորոշ են ոչ թե մասշտաբային ռազմական գործողությունները, որոնցում ներգրավված են բազմաթիվ զինվորական ստորաբա-

ժանումներ, այլ զինված հակամարտությունները, որոնցում կռվող զինվորների թվաքանակի մեծությունն իր կարևորությամբ և նշանակությամբ զիջում է պրոֆեսիոնալիզմին և հմտությանը: Այն պետությունները, որոնք ընդօրինակում են այս փորձը պետք է հաշվի առնեն նշված հանգամանքը:

Հօգուտ պրոֆեսիոնալիզմի կատարված ընտրությունը, ինչպես նաև «զինվորական համազգեստով ազգային պետությանը» բնորոշ շատ բաղադրիչներից հրաժարումը հանգեցրին Իսրայելում հասարակական երկու՝ ռազմական և քաղաքացիական աշխարհայացքների ամրապնդմանը: Ներկայումս Իսրայելում զարգանում են ինքնության երկու իրարամերժ մոդելներ, որոնց հիմքում ընկած են համեմատաբար նոր միտումներ՝ հակամիլիտարիզմը և նեոմիլիտարիզմը: Ըստ այդմ՝ կարելի է առանձնացնել հասարակական երկու աշխարհայացք՝ քաղաքացիական և ռազմականացված: Չնայած այն հանգամանքին, որ ինքնության այս ձևերից յուրաքանչյուրն ունի իր սեփական ակունքները, այնուամենայնիվ առկա են նաև որոշ ընդհանրություններ: Այսպես, երկուսն էլ մերժում են այն գաղափարախոսությունը, որն ամեն ինչից վեր է դասում ազգային պետությունը, որտեղ կենտրոնական դեր են խաղում ուժային կառույցները:

«Քաղաքացիական հասարակություն» տերմինը բազմաթիվ իմաստներ ունի: Վերոհիշյալում նշված հասկացության իմաստը կապվում է սոցիոլոգ Ն. Էլիասի կողմից առաջարկված արևմտյան աշխարհի զարգացման պատկերի հետ: Նա «քաղաքացիականության գործընթաց» տերմինը գործածում է՝ բնութագրելու համար այն միջոցը, որի օգնությամբ բնակչությունը վերացարկվում է առօրյա կյանքից, միջանձնային հարաբերություններից և պետության տարածքից դուրս գալիս միջպետական շփումների մակարդակ: Քաղաքացիական հասարակությունն ակնհայտորեն նոր դարաշրջանի արդյունք է, որն ի հայտ է եկել «Սառը պատերազմի» ավարտից հետո: Քաղաքացիական հասարակու-

թյան ձևավորմանը ուղեկցում է հակամիլիտարիստական մոտեցումը: Ռազմական ուժի օգտագործման լեգիտիմացումը սահմանվում է որպես «մշակութային միլիտարիզմ»: Հետևաբար «հակամիլիտարիզմ» հասկացությունը նշանակում է բողոք ընդդեմ ներքաղաքական և արտաքին քաղաքական խնդիրների ուժային լուծումների: «Ռազմականացված հասարակություն» հասկացությունը ևս ենթադրում է պետության (նաև քաղաքացիական հասարակության) քննադատություն. նոր դարաշրջանում, երբ արժեզրկվում է դրա կարգավիճակը, և փոխվում է պետությունների և ժողովուրդների միջև փոխհարաբերությունների բնույթը, պետությունն առավել քիչ է փորձում քաղաքական նպատակների իրականացման համար դիմել ռազմական ուժի կիրառմանը, իսկ նրա իրական ինքնիշխանությունը, ի թիվս այլ հարցերի, նաև պատերազմ սկսելու հնարավորության վերաբերյալ կրճատվում է:

«Նեոմիլիտարիզմ» հասկացությունը փաստում է, որ որոշ հասարակական խմբեր ձգտում են վերականգնել բանակի կենտրոնական նշանակությունը. կողմնակից են քաղաքական նպատակների իրագործման համար կազմակերպված բռնության առավել հաճախ օգտագործմանը («թո՛ւյլ տվեք՝ բանակը հաղթի». այսպես էր հնչում երկրորդ ինտիֆադայի կարգախոսը) և ցանկանում են պետության և հասարակության կյանքում ամրապնդել բանակային արժեքների դերը[71]:

Խոսքը երկու աշխարհայացքային մոդելների մասին է, որոնք, բնականաբար, միանշանակորեն չեն կարող հասարակության մեջ արտահայտվել: Ամեն դեպքում դրանց ծագումը փաստում է այն մասին, որ ներկա դարաշրջանում կասկածներ կան այն հիմքերի վերաբերյալ, որոնց վրա նախկինում հիմնվում էր պետության իշխանությունը: Ելնելով ներկա մարտահրավերնե-

[71] Տե՛ս **Бен-Элиэзер У.,** Военизированное и гражданское общество в Израиле в начале XXI века, http://online-books.openu.ac.il/russian/democracy-and-national-security/volume2/article15.html, հասանելի՝ 26.06.2019:

ից՝ առաջին տեսակը կողմնակից է քաղաքական լուծումներին, այսինքն՝ զիջումներին և փոխզիջումներին, որոնք թելադրում է փոփոխված աշխարհաքաղաքական իրականությունը: Գտնվելով իր զարգացման սկզբնական փուլում՝ իսրայելական քաղաքացիական հասարակությունը հակված է, գլոբալ գործընթացներին մասնակցելով, իր քաղաքական հայացքները կապել ինդիվիդուալիստական և լիբերալ մոտեցումների, ինչպես նաև պլյուրալիստական և քաղաքացիական աշխարհայացքի հետ, որը միաժամանակ և՛ ընդունում է մարդկանց միջև տարբերությունների փաստը, և՛ այն, որ նրանք գտնվում են տարբեր մշակույթների ազդեցության տակ: Նշված գաղափարները ենթադրում են, որ պետական քաղաքականության հիմքում պետք է ընկած լինեն փոխըմբռնումները:

Երկրորդ տարատեսակին բնորոշ է ռազմական ուժի կիրառումը՝ որպես արտաքին քաղաքական և միջազգային գրեթե բոլոր կոնֆլիկտների լուծման նախընտրելի միջոցի ընկալումը: Ներկայումս ևս ռազմականացված հասարակության շատ ներկայացուցիչներ վստահ են, որ պատերազմները, որոնց մեջ ներքաշվել է Իսրայելը, «սուրբ» են, իսկ 1967 թ. նրանց կողմից գրաված տարածքները պետք է օրենքով պատկանեն հրեական պետությանը, քանի որ «նախնիների ժառանգությունն են»[72]: Ոմանք էլ կարծում են, որ այդ հողերը ռազմավարական նշանակություն ունեն և ծառայում են որպես Իսրայելի դիրքերի ամրապնդման աշխարհաքաղաքական ռեսուրս: Նրանք կողմ են ուժային և բռնության գործադրման եղանակով տարածքների պահպանմանը: Ըստ էության, որպես գլոբալիզացիոն գործընթացների այլընտրանք առաջարկում են պարտիկուլյար շրջանակներում մեկուսացում: Նման հայացքների կողմնակիցները գտնում են, որ իրականությունը

[72] Տե՛ս **Бен-Элиэзер У.,** նշվ. աշխ., http://online-books.openu.ac.il/russian/democracy-and-national-security/ volume2/article15.html, հասանելի՝ 26.06.2019:

պետք է կառուցել մեկ ճշմարտության շուրջ՝ լինի դա ազգային, կրոնական, անվտանգության շահերից թելադրված կամ էլ վերոնշյալ տարբերակների համադրություն: Քաղաքականությունը պետք է ծառայի այս ճշմարտության արմատավորման նպատակին: Այս մոտեցման շրջանակներում բանակը դիտարկվում է որպես հիմնական գործիք, որի միջոցով Իսրայելը պահպանում է իր ազգային բնավորությունը, իր յուրահատկությունը և տարածաշրջանում ունեցող գերակա դիրքը: Այստեղից բխում է, որ զինվորական ծառայությունը չի համարվում լոկ պարտականություն: Այն ենթադրում է կարգավիճակ և հեղինակություն, ծառայում է որպես պրոֆեսիոնալիզմի մարմնացում, իսկ երբեմն էլ դիտարկվում որպես սուրբ պարտականության կատարում:

Ե՛վ միլիտարիզացիայի, և՛ քաղաքացիական հասարակության զարգացման երկու միտումներն էլ պարադոքսալ կերպով կապված են միմյանց հետ: Դրանք երկուսն էլ ակնհայտորեն դարձել են «միակ» ճշմարտության արժեզրկման հետևանք՝ ասոցացվելով «զինվորական համազգեստով ազգի» և պետության հետ: Մեր գնահատմամբ երկուսն էլ ներդաշնակորեն փոխլրացնում են միմյանց:

Այսպիսով՝ խաղաղության հաստատումը միայն քաղաքական լիդերների խնդիրը չէ: Այն մեծ մասամբ կախված է հասարակ քաղաքացիներից: Այս համատեքստում հարց է առաջանում՝ արդյոք Իսրայելի հասարակությունը հասունացել է խաղաղ կյանք վարելու համար, թե միջպետական խնդիրների կարգավորման ուժային եղանակները՝ թեկուզ պարտադրված, մինչ այժմ քաղաքացիների մեծ մասի կողմից ընկալվում են որպես լեգիտիմ: Մի բան ակնհայտ է. ներկայումս Իսրայելի բնակչության վերաբերմունքը բանակի և ռազմական գործողությունների նկատմամբ էական փոփոխությունների է ենթարկվել, ինչը պայմանավորված է նոր իրողություններով և նոր բնույթի պատերազմներով:

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ
«ԱԶԳ-ԲԱՆԱԿ» ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ԿԵՆՍԱԳՈՐԾՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

Ազգային բանակը դեռևս Հայաստանի առաջին հանրապետության կարևորագույն ձեռքբերումներից է: Պետական կարգի և ազգային սահմանների պահպանման հիմնական երաշխավորը, առանցքային ինստիտուտը բանակն է: Գիտակցելով վերջինիս կենտրոնական դերակատարումը պետականության ձևավորման և ամրապնդման հարցում՝ դեռևս այդ ժամանակներից թեկուզ փոքրաթիվ, բայց որակյալ և մարտունակ բանակ էր կազմավորվել:

Հարկ է նշել, որ ազգն անցնում էր պատերազմի այնպիսի թոհուբոհով, որի անմիջական մասնակիցն էր դառնում յուրաքանչյուր ոք: Ուստի հզոր և մարտունակ կարող է լինել այն բանակը, որին ծնող ժողովուրդը ուժեղ է: Իսկ ժողովրդի ուժ ասելով՝ անհրաժեշտ է հաշվի առնել ոչ միայն ֆիզիկական ուժը, այլև հոգևոր կամքը և մարտական ոգին. կամքի արտահայտությունը սերն է հայրենիքի նկատմամբ, որի երաշխավորը պետությունն է: Ուժը ոչ միայն ռազմաարդյունաբերությունն է, այլև գաղափարական կոփվածությունը և բարոյահոգեբանական վիճակը, որը հիմնավորվում է «Ազգ-պետություն» հայեցակարգի միջոցով: Ճիշտ կլիներ, որ դրա հիմքում ընկած լիներ ազգ-պետություն-բանակ եռամիասնության գաղափարը, քանի որ պետությունը ազգի և բանակի կապող օղակն է և միակ քաղաքական ինստիտուտը, որի գործունեությունը նպաստում է հասարակական-քաղաքական համակարգում բանակի լիարժեք ինտեգրմանը: Այսինքն՝ բանակի մարտունակության և կայունության վրա իր անմիջական կնիքն է թողնելու յուրաքանչյուր ոլորտի ձեռքբերում կամ ձախողում, և հակառակը՝ հասարակության զարգացման միտումները կախված են ու-

ժեղ բանակից: Հասարակություն-բանակ կապը կարող է ամրապնդվել միայն պետության գործունեության նկատմամբ հավատի և համոզմունքի հիման վրա լեգիտիմ քաղաքական էլիտայի գործառության արդյունքում: Բացի դրանից՝ ՁՈՒ բարեփոխման և ռազմաարդյունաբերության զարգացմանն ուղղված կառուցակարգերը ավելի են ընդլայնում հասարակության արդիականացման գործընթացը: Ուստի արդի փուլում բանակի բարեփոխմանն ուղղված ծրագրերը հնարավոր չէ իրականացնել առանց հանրային գիտակցության ընկալման, որն էլ ավելի հրատապ է դարձնում ՁՈՒ քաղաքացիական միասնության հարցերը փոխակերպվող հասարակարգերում:

Ասվածից պարզ է, որ ազգ-բանակը հասարակության վստահության ամենաբարձր աստիճանն է, հավատարմությունը արժեհամակարգին, որի համար առանցքային դերակատարում ունի սպայակազմը: Ուստի սպային հարկավոր է դաստիարակել և կրթել ոչ թե անբովանդակ ու մտացածին, այլ իրատեսական գաղափարներով, այնպիսի գաղափարներով, որոնք հասարակության ընկալումներից են բխում:

Լոկ խոսքերով հնարավոր չէ ստիպել սիրել հայրենիքը. դա հակառակ ազդեցությունը կունենա: Այսպես, զինվորական ծառայությունը, անկախ գաղափարական միասնությունից և հայրենիքի սիրո դրսևորումից, նաև աշխատանք է, որը պետք է սպային ու նրա ընտանիքին ապահովի արժանապատիվ կյանքով: Հետևաբար նախքան «հայրենապաշտ» գաղափարներ առաջ քաշելը անհրաժեշտ է, որ պետությունը լուծի սոցիալական և նյութական մի շարք խնդիրներ, որոնք հետագայում կհանգեցնեն բոլորի համախմբվածությանը և կազմակերպվածությանը:

Ի հավելումն դրան՝ նշենք, որ գաղափարականը և նյութականը երբեք չպետք է միևնույն հարթությունում դիտարկել, այլ մեկի իրագործումը պետք է բխեցվի մյուսից: Այնինչ, մինչ այսօր ու-

ենք անապահով և անտուն սպաներ, հաշմանդամ զինծառայողներ, որոնք եղել և մնում են մեր անվտանգության երաշխավորները, նրանք կռվել և հարկ եղած դեպքում կկռվեն ոչ միայն պետության, այլև գաղափարի համար: Ասվածի վառ օրինակը Արցախյան ազատամարտի և Ապրիլյան քառօրյայի հերոսներն են, որոնց մի մասը զոհվեց հանուն հայրենիքի գաղափարի: Բացի դրանից՝ հասարակություն-բանակ փոխհարաբերությունների միջոցով խնդիրների լուծման արդյունավետությունը մեծապես որոշվում է, մի կողմից, զինվորական անձնակազմի բարոյական և հոգեբանական գիտակցությամբ, մյուս կողմից՝ զորքերի մարտական պատրաստվածության մակարդակով, քաղաքացիների սոցիալական բարեկեցությամբ, ինչը հասարակության կայունության կարևոր գործոն է: Այս առումով, բնականաբար, հասարակություն-բանակ կառուցակարգերի ավելի արդյունավետ փոխգործակցությունը և դրանց զարգացման մեխանիզմները առաջացնում են հումանիտար գիտությունների դերակատարությունը խորացնելու անհրաժեշտություն: Ուստի հասարակության և բանակի փոխհարաբերությունը ժամանակակից հասարակության սոցիալ-քաղաքական կյանքի զարգացման գործոն է:

Ներկայումս հասարակություն-բանակ փոխօգնության և սոցիալական շարժունակության դրսևորման առումով կարևորվում է զինծառայողների մասնագիտական բարձր պատրաստվածությունը, որն էլ խթանում է հասարակական-քաղաքական համակարգի տարբեր ոլորտների մասնագետների համընդգրկուն գործակցությունը բանակի հետ: Այսինքն՝ ազգ-բանակը այն միասնությունն է, որը ակտիվ փոխգործակցության մեջ է հասարակական-քաղաքական կյանքի յուրաքանչյուր ոլորտի հետ, և նրա կադրերի ներուժը խթանում է վերջինիս զարգացմանը: Բացի դրանից՝ մարտունակ և գաղափարահենք բանակի գրավականներից է այն, որ ռազմաուսումնական հաստատությունները համա-

լրվում են մասնագիտական բարձր պատրաստություն ունեցող այնպիսի կադրերով, որոնք բարձր հմտություններ ունեն ոչ միայն ռազմարվեստի և ռազմաարդյունաբերական համալիրի, այլև քաղաքացիական գիտակցության և բարոյահոգեբանական բարձր մակարդակի տեսանկյունից: Վերջինս փոքր ազգերի համար կարող է վճռորոշ լինել հենց համախմբվածության և մոբիլության տեսանկյունից: Այսինքն՝ ազգ-բանակը ազգ-պետություն-բանակ եռամիասնության հետևողական շարունակությունն է, որում ծնողը, ուսուցիչը, հրամանատարը միասին ջանում են նպաստել վաղվա սերնդի դաստիարակմանը: Ուստի անհրաժեշտ է դեռևս մանուկ հասակից կրթել և հայրենիքի պաշտպանի գաղափարի կրողը դարձնել քաղաքացուն, ինչպես նաև հաշվի առնել ժողովրդի մենթալիտետը և հոգեկերտվածքը, գոյություն ունեցող խնդիրների ամբողջությունը, առանց որի ցանկացած հայեցակարգ վերածվում է դատարկախոսության կամ էլ՝ կամարտահայտման սահմանափակման:

Ազգ-բանակը հասարակության քաղաքացիական գիտակցության բարձր գրավականն է, երբ վերամբարձ խոսքերով չես համոզում քաղաքացիներին բանակի մի մասը կազմել, այլ իրենք են տեսնում այդ անհրաժեշտությունը՝ հիմնվելով գաղափարների և համոզմունքների վրա:

Ազգ-բանակը սոցիալական պետության բանակն է, որտեղ զինծառայողն ու սպան ապրում են արժանապատիվ, որտեղ պահեստազորի սպան ու հաշմանդամը ստանում են արժանավայել թոշակ՝ ապրելով բարեկեցիկ կյանքով:

Ազգ-բանակը այն բանակը չէ, որը ներդնում է այն համոզմունքը, երբ երեխան ծնվում և այդ պահից համարվում է բանակային. հասարակությունը բանակի վերահսկողության տակ է անցնում, մարդիկ համարվում են առաջին հերթին ռազմական ոլորտի ծառայողներ՝ գիտակցելով, որ իրենք հանդես են գալիս

որպես զինուժ. մարդիկ չպետք է մտածեն, որ իրենք ծառայում են կոնկրետ իշխանությանը, այլ հայրենիքին: Ուստի դա բացառելով՝ մենք կունենանք գաղափարահենք և մարտունակ, այլ ոչ թե հլու-հնազանդ կամ ռազմականացված հասարակություն: Հակառակ դեպքում այն կարող է հանգեցնել սոցիալական անարդարության, որի հետևանքը օտարացումն ու արտագաղթն են:

Ազգ-բանակում վստահությունն ու հավատը այնքան անքակտելի են, որ ծնողները իրենց զավակներին ոչ թե մանուկ հասակից հեռացնում են հայրենիքից բանակում չծառայելու համար, այլև խրախուսում և քաջալերում են նրանց ծառայությանը՝ ամրապնդելով սերը հայրենիքի նկատմամբ: Հարկ է նշել, որ այդ թերահավատ մոտեցումը ձևավորվել է տարիներ շարունակ ՁՈՒ-ում ոչ կանոնադրային հարաբերությունների ակնհայտ դրսևորման և բացասական այլ երևույթների արդյունքում:

Ազգ-բանակը տնտեսական զարգացման և կայունության բանակն է, որը նպաստում է ռազմաարդյունաբերական համալիրի արդիականացմանը:

Ազգ-բանակը քաղաքացիական-ժողովրդական բանակն է, որտեղ մեկը կռվում է, մյուսը՝ դաստիարակում-կրթում, իսկ ուրիշը՝ հագուստ կարում, սնունդ պատրաստում և այլն: Հասարակության լայն զանգվածների սոցիալականացման և հասարակություն-բանակ համագործակցության ընթացքում ձևավորվում են նոր կառույցներ և հասարակական կազմակերպություններ, որոնց գործունեությունը միտված է բանակի օժանդակմանն ուղղված տարաբնույթ ծրագրերի իրագործմանը: Այսինքն՝ բարոյահոգեբանական նկարագիր և քաղաքացիական գիտակցության բարձր մակարդակ ունեցող հասարակությունը կրում է հայրենիքի պաշտպանի գաղափարը և իր պատրաստակամությամբ ու գործունեությամբ օրինակ դառնում՝ ապահովելով բարոյահոգեբանական անհրաժեշտ կապ բանակի և հասարակության հետ: Ուստի

քաղաքացիական հասարակություն-պետություն-մասնավոր ոլորտների եռամիասնության ընթացակարգերի ներդրման ամբողջությունը կարող է նպաստել հասարակություն-բանակ արդյունավետ փոխգործակցությանը:

Հարկ է նշել, որ նախկին կառավարության կողմից առաջ քաշված հայեցակարգի գործնական կողմը գաղափարի տեսական բովանդակությունից հեռացել է: Բանակի հզորացման և զինծառայողների կարիքների բավարարման համար կյանքի կոչված պարտադիր «1000-ական դրամի» ծրագիրը գաղափարականից անցավ նյութական հարթություն՝ առերեսվելով հասարակության դժգոհություններին և քննադատությանը: Ըստ այդմ՝ ազգ-բանակի իրական գաղափարը բաժանվեց տարբեր բևեռների՝ հոգևորից նյութականի, ինչը ավելի էր խորացրել դժգոհությունները, երբ մի պետության մեջ ազգ-բանակի գաղափարն էր ներդրվում, իսկ մյուս կողմից էլ բացահայտվում էին պետական ինստիտուտները ներկայացնող պաշտոնյաների բանակից կատարած հափշտակություններ, պաշտոնական դիրքի չարաշահումներ: Այսինքն՝ մի կողմից գումար է հավաքվում՝ բանակին օժանդակելու համար, իսկ մյուս կողմից՝ բանակից զենք և ուտելիք հափշտակվում:

Ազգ-բանակը այն բանակը չէ, երբ զինծառայողի զինգրքույքը սնագիր է դառնում՝ նշելով, որ վերջինս մասնակցել է մարտական գործողությունների, իսկ հետո՝ ջնջվում: Ապրիլյան քառօրյայից հետո նմանօրինակ իրողություններ տեղի ունեցան, երբ զորացրված մի շարք երիտասարդներ իրենց բողոքի ձայնն էին բարձրացրել՝ պահանջելով վերականգնել իրենց իրավունքները:

Ազգ-բանակը այն բանակը չէ, երբ հաշմանդամ և վիրավոր զինծառայողները, նրանց ընտանիքները բուժման համար ՀՀ քաղաքացիներից գումար են հավաքում: Հետևաբար ազգ-բանակը այն բանակն է, երբ համապատասխան կառույցները, պատկան

մարմինները հետևողականորեն զբաղվում են նշված խնդիրներով:

Ազգ բանակը այն բանակը չէ, որտեղ ընդգծված է զինվորականների սոցիալական շերտավորումը, երբ բարձրաստիճան զինվորականները ապրում են բարեկեցիկ և ճոխ կյանքով, իսկ պայմանագրային զինծառայողներն ու սպաները մի կերպ են գոյատևում ու ապահովում իրենց ընտանիքները:

Այսպիսով՝ «Ազգ-բանակ» հայեցակարգը ներդնելու պատճառները գուցե նաև ժողովրդագրական էին, սակայն կարիք կար գաղափարապես այն հիմնավորելու: Նշված ծրագրերի իրագործման համար անհրաժեշտություն կար բարոյահոգեբանական, սոցիալական ուղղությամբ նախապատրաստական լուրջ աշխատանքների, որոնք ոչ միայն մեծ ներգործություն կունենային պետության ամրապնդման ոլորտում, այլև կնպաստեին հասարակությանը գաղափարապես կոփելուն: Այդ իսկ պատճառով էլ անհրաժեշտ էր նախնառաջ իրականացնել որոշակի ընթացակարգեր, մասնավորապես զսպել կաշառակերությունը, պետական ինստիտուտների նկատմամբ հավատ և վստահություն ներշնչել, այնուհետև առաջ քաշել հոգևոր ուժը ամրապնդելու գաղափարը, որ չստացվեր՝ ամեն ինչ ուղղված էր իշխանությունների կամայականությունների էլ ավելի սաստկացմանը:

Հարկ է նշել, որ բանակը Հայաստանի երրորդ հանրապետության առանցքային ինստիտուտն է, և ինչ-որ հայեցակարգերով չէ, որ պետք է բարձրացվեին հայրենասիրական մոտիվները: Դեռևս պատերազմի տարիներից մեծից փոքր կրել են հայրենիքի պաշտպանի գաղափարը, յուրաքանչյուր ոք իր մեջ հայրենիքի պաշտպան է տեսել, յուրաքանչյուրը իր ներդրումն է ունեցել ազգային բանակի հզորացման և շենացման գործում: Հայ մայրերը կորցրել են իրենց որդիներին պատերազմի դաշտում: Պատահական չէ, որ այս ամենը ներգործել է մարդկանց հոգեբանության

վրա, համակել նրանց հայրենիքի զինվորը դառնալու վեհ գաղափարով, որը միայն հայրենիքը սիրող և բարոյահոգեբանական բարձր նկարագիր ունեցող քաղաքացին կարող էր անել:

Պատերազմող պետության քաղաքացին արդեն իսկ հասարակություն-բանակ գաղափարի և իրողության կրողն է՝ անկախ իր ցանկությունից: Խնդիրն այլ հարթությունում է. այն հասարակությունը, որը ստեղծեց և ամրապնդեց հայրենիքի պահպանության ամենաուժեղ կառույցը, այն ժողովրդի զավակը, որը գիտակցաբար հայրենիքի համար զոհվեց, հենց ազգ-բանակի ամենավառ դրսևորումն է: Իսկ այն հասարակության մեջ, որտեղ ոչինչ չի խնայվել՝ բանակը կառուցելու համար, քաղաքացին չի խուսափի բանակից, առհասարակ կարիք չի լինի անգամ հիշեցնելու, որ մենք բանակի մի մասն ենք, նրա կրողը: Ուրեմն անհրաժեշտ է քայլեր ձեռնարկել՝ բանակում կանոնադրային հարաբերությունները իրավակարգավորելու, բարձրացնելու սպայակազմի բարոյական նկարագիրը, ի սպառ բացառելու կոռուպցիոն բոլոր դրսևորումները: Իսկ զինվորը սպային պետք է ընկալի ոչ թե որպես իրեն պատժողի, վիրավորողի, այլ որպես ծնողի և դասախոսի շարունակողի: Զինվորը չպետք է մտածի, որ եկել է ուրիշ միջավայր՝ այն համարելով մեկուսացնող հաստատություն, այլ ընտանիք, որը պետք է ստեղծի այնպիսի պայմաններ, որ քաղաքացին չկտրվի իր ընտանիքից, և նրանց հարաբերությունները առավելագույնս պահպանվեն:

Հարկ է նշել, որ ՀՀ-ում տեղի ունեցած հեղափոխությունից հետո ձևավորված իշխանության հետագայում տարած կադրային ճիշտ քաղաքականությամբ, քաղաքական որոշումների ընդունման հանրօգուտ և հետևողական մեխանիզմներով է հնարավոր բարձրացնել պետական կառավարման արդյունավետությունը, որից էլ կբխի մեր հասարակության մեջ առանցքային մի շարք խնդիրների լուծումը: Պետական ապարատի առողջացման և հե-

տագա զարգացման համար առաջին հերթին անհրաժեշտ է այն համալրել մասնագիտական և քաղաքացիական գիտակցության բարձր մակարդակ ունեցող անհատներով: Ուստի կառավարության գործունեության նկատմամբ վստահության և հավատի դրսևորմամբ է նաև հնարավոր հասարակություն-բանակ գաղափարի հիմքային ընկալումը: Պաշտոնատար անձանց և հասարակական-քաղաքական կյանքում դերակատարների հանրային գերակայության շահը արժևորելու սեփական օրինակը պետք է հիմք դառնա այն իրագործելուն: Այսինքն՝ քաղաքական ինստիտուտների նկատմամբ վստահության չափանիշը որոշվում է պետական այրերի բարոյահոգեբանական նկարագրով, հանրային շահը սեփականից վեր դասելու իրողությամբ: Մասնավորապես ՀՀ ներկայիս կառավարության գործունեության հիմքում պետք է առաջնային տեղ զբաղեցնի հասարակության հետ փոխգործակցությունը:

Այսպիսով՝ ներկայումս ՀՀ-ում ներդրվել է քաղաքացիական հասարակության ինստիտուտների զարգացման համապատասխան միջավայր, որը կմիջնորդավորի բնակչության վերաբերմունքը բանակի նկատմամբ: Իսկ հասարակության գիտակցության մեջ որքան բարձր է իշխանության վարած քաղաքականության արդյունքում ստացված գնահատականը, այնքան գիտակցված և խորն է համախմբվածության և կազմակերպվածության աստիճանը՝ որպես հասարակարգի ժողովրդավարացման ցուցիչ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով՝ վերոշարադրյալից ելնելով կատարել ենք հետևյալ եզրահանգումները:

Միջնադարյան շվեյցարական բանակը լավագույնն էր Եվրոպայում: Այն իր մարտունակությամբ և բարոյահոգեբանական նկարագրով էականորեն տարբերվում էր միջնադարյան Եվրոպայում ավանդույթ դարձած իշխանական և քաղաքային աշխարհազորներից: Դրա հաջողությունը պայմանավորված էր մի շարք գործոններով, այդ թվում՝ երկրի սոցիալ-տնտեսական, մշակութային և քաղաքական զարգացման առանձնահատկություններով: Ներկայումս ևս Շվեյցարիայում շարունակվում են բանակաշինության լավագույն ավանդույթները: Հայրենասիրության, քաջության և ինքնազոհաբերության խորը զգացումը ժողովրդի մոտ դրսևորվում է դեռևս վաղ հասակից:

Ֆրանսիական ազգային բանակի ստեղծման և կայացման փորձի ուսումնասիրումը Յակոբինյան դիկտատուրայի օրոք ցույց է տալիս, որ ազգ-բանակը գործում է, երբ մղվող պայքարն արդարացի է: Երբ բանակը պաշտպանականից վերածվում է հարձակողականի, ժողովրդից այլևս չի կարելի ակնկալել պատերազմական գործողություններին համընդհանուր մասնակցություն: Ֆրանսիայի օրինակով պատմությունը ցույց է տալիս, որ ամենահզոր բանակն անգամ, երբ տարվում է փառասիրությամբ, երբ այնտեղ արմատավորվում են ավատատիրական սկզբունքներն ու անհավասարությունը, վաղ թե ուշ կործանվում է: Մարտունակ և տոկուն բանակ ունենալու համար յուրաքանչյուր պետություն պետք է խուսափի այս արատավոր երևույթներից:

ՀՀ-ի համար հատկապես կարևորվում է բանակաշինության Իսրայելի փորձի ուսումնասիրումը: Ինչպես ՀՀ-ի, այնպես էլ Իսրայելի պոտենցիալ հակառակորդները բանակի թվաքանակով

գերազանցում են վերջիններիս: Իսրայելական բանակի հաջողության գրավականը, ինչը թույլ է տալիս հավասարակշռություն մտցնել ուժերի հարաբերակցության մեջ և մեղմել հակառակորդների բազմաքանակության գործոնը, պայմանավորված է մի շարք հանգամանքներով.

- Իսրայելում պաշտպանական համակարգի արդիականացումը պայմանավորված է պետության ոլորտային զարգացմամբ: Անվտանգության ապահովումը համակարգային լուծում պահանջող խնդիր է: Այն, ինչ ուղղված է պետության հզորացմանը, ծառայում է բանակի հզորացման գործին:
- Իսրայելում բանակը ազգային ծրագիր է, որի ուժը ոչ միայն կատարելագործված անձնակազմն է, այլև այն փաստը, որ այն արտահայտում է ժողովրդի ոգին, նրա տոկունությունը:
- Ազգային բանակը ապակուսակցականացված է, բայց ոչ ապաքաղաքականացված, հակառակը, ներքաղաքական կյանքում վերջինիս բացառիկ դերակատարությունը օժտում է դրան արտաքին քաղաքականության մեջ ազդեցություն ունենալու արտոնությամբ:
- Իսրայելի համար բանակի հզորացման գործում մեծ է սփյուռքի դերակատարությունը:
- Պետությունը կանգնած է զինվորի կողքին՝ ինչպես բարոյական այնպես էլ նյութական աջակցություն ցուցաբերելով:

«Ազգ-բանակ» հայեցակարգը չպետք է հանգեցնի երկրի ռազմականացմանը, որտեղ հասարակությունը բանակի վերահսկողության տակ է անցնում, և մարդիկ համարվում են առաջին հերթին ռազմական ոլորտի ծառայողներ: Այն կարող է մի շարք խնդիրներ լուծել, առաջին հերթին՝ ազգային համախմբման գործառույթ իրականացնել. միայն համախմբվածության և կազմակերպվածության միջոցով կարելի է հասնել բանակ-հասարակու-

թյուն փոխհարաբերությունների կարգավորմանը և հասարակության մեջ վստահության մակարդակի բարձրացմանը: Այսինքն՝ «Ազգ-բանակը» լոկ հայեցակարգ չէ, այն արժեհամակարգ է, որի նպատակը ողջ հայությանը անվտանգության գործընթացում ներգրավելն է: Այն անմիջականորեն բխում է մեր գոյապահպանության պահանջից՝ հայոց ազգային գաղափարախոսության կարևորագույն հիմնադրույթներից մեկի՝ ամբողջական հայրենիքի և անկախ պետականության գաղափարից: Առանց Արցախի անվտանգության ապահովման չի կարող լինել անվտանգ Հայաստան:

ՀՀ-ում «Ազգ-բանակ» հայեցակարգի շեշտադրումները արտացոլված են երկու հիմնական ծրագրերում՝ «Պատիվ ունեմ» և «Ես եմ»: Նյութական ռեսուրսների սղության, հասարակության ակնհայտ շերտավորման պայմաններում նման ծրագրերը չէին կարող հաջություն ունենալ, դրանով է բացատրվում նման ծրագրերի՝ մեծ հոսքերի սահմանափակման նպատակով մրցութային կարգով անցկացումը: Սակայն գործազրկության պայմաններում օգտագործելով ժողովրդի սոցիալապես ոչ բարվոք վիճակը՝ աղքատության մեջ գտնվող մարդկանց մեծ տոկոսը, որը ստիպված հայտնվում էր զինված ուժերի շարքերում, մի կողմից մեղմացնում էր բողոքական զանգվածի դժգոհության ալիքը, մյուս կողմից՝ թուլացնում բանակը:

Փոխարենը այդպիսի ծրագրերը հաջողություն կունենան, եթե արժևորվեն զինվորականների մասնագիտական ունակությունները, ռազմարդյունաբերական համալիրի զարգացումը, առաջնահերթությունը տրվի զինվորական անձնակազմի մարտական պատրաստության աստիճանի բարոյական և հոգեբանական գիտակցության բարձրացմանը, ինչն էլ, քաղաքացիական գիտակցության և բարոյահոգեբանական բարձր մակարդակ ապահովելով, կնպաստի հանրային վստահության ամրապնդմանը:

Բնականաբար, նման գաղափարի իրագործման համար չափազանց կարևոր է համապատասխան նյութական ռեսուրսների առկայությունը: Սակայն ամենակարևորը բարոյահոգեբանական մթնոլորտի ստեղծումն է: Այդպիսի մթնոլորտի պայմաններում, օրինակ, Իսրայելի ժողովուրդը ոչ միայն պատրաստակամությամբ է ծառայում, այլև շնորհակալ է բանակին իր ծառայության համար:

«Ազգ-բանակ» գաղափարը նախ պետք է արմատավորվի երիտասարդության ինքնագիտակցության մեջ, դառնա նրանց արժեհամակարգի անբաժան մասը: «Հայրենապաշտ և գաղափարապաշտ» երիտասարդության առկայությունը Գ. Նժդեհը համարում էր մեր երկրի «ապագան և փրկությունը»: «Սու՞րը, թե՞ գրիչը: Թե՛ մեկը և թե՛ մյուսը. ես սիրեցի և գործածեցի երկուսն էլ: Սակայն հայտնվելով երկընտրանքի առջև՝ ես պիտի նախընտրեի առաջինը, քանզի լինում են ժամանակներ, երբ գրիչը, խոսքը, ճշմարտությունն իրենց ճամփան հարթելու համար կարիք են զգում սրի»,– գրում էր նա:

Երիտասարդությունը երկրի ամենամեծ արժեքն է, նրանից է կախված պետության ապագան: Վերջինիս դաստիարակության և արժեհամակարգի ձևավորման հարցում մեծ դերակատարում ունի սոցիալականացման առաջնային ինստիտուտը՝ ընտանիքը: Այն մեծ ներդրում պետք է ունենա ուժեղ, հանրային կյանքով ապրող հասարակության կերտման գործում, որն օժտված կլինի իր երկրի համար մտահոգ երիտասարդությամբ և քաղաքացիական գիտակցության բարձր աստիճան ունեցող քաղաքացիներով: Յուրաքանչյուր ոք պետք է գիտակցի սեփական երկրի նկատմամբ պատասխանատու լինելու զգացումը. ոչ միայն պետությունն է պատասխանատվություն կրում իր քաղաքացիների համար, այլև քաղաքացիներն են իրենց գործողություններով պետության առաջ

պատասխանատու: Յուրաքանչյուր ոք նախնառաջ պետք է գիտակցի, որ սեփական հաջողությունը իր երկրի զարգացման գրավականն է:

«Ազգ-բանակ» գաղափարը միայն խոսքով իրագործել հնարավոր չէ: Այս գաղափարն առաջին հերթին պետք է օգնի յուրաքանչյուրի մոտ հավատ և համոզմունք ստեղծել քաղաքական համակարգի ամենագլխավոր ինստիտուտի՝ պետության նկատմամբ: Դրա իրագործմանն իրենց մասնակցությունը պետք է ցուցաբերեն հասարակության բոլոր շերտերը, այդ թվում՝ և քաղաքական էլիտան: Ստեղծված նոր պայմանները քաղաքական էլիտա-հասարակություն փոխհարաբերությունների վերարժեորման առաջնահերթություն են ծնում:

Ադրբեջանում քարոզվող հայատյացության, Հայաստանին պարտադրվող սպառազինությունների մրցավազքի պայմաններում ծագում են հիմնախնդիրներ, որոնց լուծման գործում «Ազգ-բանակ» հայեցակարգը կենտրոնական դերակատարություն կարող է ունենալ: Անհրաժեշտ է պետության պաշտպանունակությունն այնպիսի աստիճանի հասցնել, որի պայմաններում պաշտպանական համակարգը երաշխավորված կերպով հետ կմղի առկա և հավանական ռազմական սպառնալիքները: Այդ համակարգի կատարելագործումը ենթադրում է ՀՀ-ի համար ներկայումս և հետագայում հակառակորդից բխող սպառնալիքների սթափ գնահատում:

«Ազգ-բանակ»› հայեցակարգի հետագա իրագործումը հասարակության մեջ պետք է արմատավորի այն համոզմունքը, որ միայն հայրենիք-սփյուռք միասնականության պայմաններում է հնարավոր հասնել պետականաշինության ամրապնդմանը:

Նախնառաջ պետությունը պետք է պատասխանատվություն ստանձնի, ապա միայն սերմանի նվիրվածություն դեպի հայրե-

նիք: Հակառակ դեպքում այս հայեցակարգը կդառնա ևս մեկ լծակ՝ ժողովրդին ծնկի բերելու համար: Եթե ապահովվեն բոլոր անհրաժեշտ պայմանները, ժողովուրդն ինքը կհանգի «Ազգ-բանակ» հայեցակարգի իրականացման անհրաժեշտությանն այն ձևով, ինչպես այն ընդունելի է:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Գրքեր

1. Ենգոյան Ա., Արդի դարաշրջանի գաղափարախոսական հոսանքները, Ե., 2002:
2. Մանուկյան Ա., Քաղաքական ուսմունքները նորագույն ժամանակներում, Ե., 2015:
3. Войтиков С., Армия и власть, Глава 2, «Все силы и средства Социалистической республики…», Бонапартистские идеи Троцкого и их практическое воплощение, 1918.
4. Меринг Ф., Военно-исторические экскурсии // История войн и военного искусства / Ф. Меринг. – СПб., М., 2000.
5. Макиенко К. В., В ожидании бури: Южный Кавказ, Центр анализа стратегий и технологий, М., 2018.
6. Бонапарт Н., Император революции. М., Эксмо, 2017. Состав, подготовка текстов- Пименова И., Яськов В. (Подарочные издания).
7. Соколов Н. История Франции на рубеже XVIII-XIX вв., Томск, 2007.
8. Уиндроу М., История военного искусства, ООО Издательская группа Азбука-Аттику, 2018.

Հոդվածներ

9. Стариченок В., Лапчик С., Развитие военного искусства швейцарской армии на рубеже средневековья и Нового времени // Европа: актуальные проблемы этнокультуры: материалы V международной науч.-теорет. конф., г.

Минск, 22 мая 2012 г. / Бел. гос. пед. ун-т им. М. Танка; редкол. В.В. Тугай (отв. ред.) [и др.], – Минск: БГПУ, 2012.
10. Aulard. La cociete des Jacobins, т. II. Заседание 8 июня, 1791.
11. Ben-Eliezer, «A Nation in Arms: State, Nation and Militarism in Israel» // Comparative Studies in Society and History, Vol. 37, No. 2, 1995.
12. Haltiner K., Civil-Military Relations: Separation or Concordance? The Case of Switzerland: Civil-Military Relations in an Age of Turbulence: Armed Forces and the Problem of Democratic Control, Strausberg, October, 2000.
13. Kümmel G., Bredow W., Civil-Military Relations in an Age of Turbulence: Armed Forces and the Problem of Democratic Control, Strausberg, October, 2000.

Համացանցային աղբյուրներ

14. Ենգոյան Ա., «Ազգ-բանակ» հայեցակարգի գաղափարաբա-դաքական հիմքերը, http://www.ysu.am/news/hy/Ashot-Yengoyan-about-his-scientific-theme, հասանելի՝ 03.07.2019:
15. Бен-Элиэзер У., Военизированное и гражданское общество в Израиле в начале XXI века, http://online-books.openu.ac.il/russian/democracy-and-national-security/volume2/article15.html, հասանելի՝ 26.06.2019:
16. Буковецкая М., Борьба якобинцев за создаие революционной армии Франции, http://istmat.info/files/uploads/30221/fr_army_m-a-bukovetzkaya_jmh_1939.pdf, հասանելի՝10.12.2018:
17. «Военная Литература» Военная мысль, Глава девятая Развитие постоянных армий, http://militera.lib.ru/science/svechin2a/09.html, հասանելի՝ 25.12.2018:

18. Давид Бен-Гурион и история становления государства Израиль, https://jewish.ru/ru/stories/chronicles/4928/, հասանելի՝ 22.12.2018:
19. Еврейские военизированные формирования, действовавшие в Палестине до образования Государства Израиль в 1948 г., https://mgimo.ru/upload/iblock/6f6/%D0%95%D0%B2%D1%80%D0%B5%D0%B9%D1%81%D0%BA%D0%B8%D0%B5%20%D0%B2%D0%BE%D0%B5%D0%BD%D0%B8%D0%B7%D0%B8%D1%80%D0%BE%D0%B2%D0%B0%D0%BD%D0%BD%D1%8B%D0%B5%20%D1%84%D0%BE%D1%80%D0%BC%D0%B8%D1%80%D0%BE%D0%B2%D0%B0%D0%B, հասանելի՝11.10.2018:
20. Кондрашов А. П., Формула успеха. Настольная книга лидера для достижения вершины, https://www.litres.ru/anatoliy-kondrashov/formula-uspeha-nastolnaya-kniga-lidera-dlya-dostizheniya-vershiny/, հասանելի՝ 19.10.2018:
21. Конституция 1793 года, http://www.bibliotekar.ru/istoriya-gosudarstva-i-prava-3/66.htm?fbclid=IwAR0mXEydTOFelw52Uy-atNy94X8-hCWDZLj_2rTDppyOSE6n6hC0hMxPE_, հասանելի՝12.02.2019:
22. Кризис «старого порядка»: Великая Французская революция и ее последствия, https://m.studme.org/300970/istoriya/krizis_starogo_poryadka_velikaya_frantsuzskaya_revolyutsiya_posledstviya?fbclid=IwAR10rUYBu5wffHoyGPig6vzYrfRQOxl55Xvckk3ftx1iydeeFrVsw07-8UQ, հասանելի՝12.02.2019:
23. Кропоткин П., Великая Французская Революция 1789-1793, https://biblio-online.ru/book/velikaya-francuzskaya-revolyuciya-1789-1793-412174, հասանելի 12.12.2018:
24. Макиавелли Н., Государь, https://www.litmir.me/br/?b=187-13&p=1, հասանելի՝ 09.02.2019:

25. Маршалы Наполеона, Сульт, Жан де Дье (1769-1851), http://adjudant.ru/fr-march/24.htm?fbclid=IwAR02VRi9tichXc2ieXmBBZnLNSXz2W0Cc-ypHU3LyaP2-N8sgTfxqoq5Etc, հասանելի՝ 30. 05. 2019:
26. Моруа А., История Франции, https://books.google.am/books?id=8pzMDQAAQBAJ&pg=PT431&lpg=PT431&dq=%D0%9B%D0%B0%D1%82%D1%83%D1%80+%D0%B4%D1%8E+%D0%9F%D0%B5%D0%BD+%, հասանելի՝ 12.03.2019:
27. Нойбергер Б., Национальная безопасность и демократия-конфликты и дилемы: Израиль в сравнительной перспективе, http://online-books.openu.ac.il/russian/democracy-and-national-security/volume1/article1.html, հասանելի՝ 13.12.2018
28. Официальный сайт Армии обороны Израиля, https://embassies.gov.il/moscow/Departments/Pages/%D0%92%D0%BE%D0%B5%D0%BD%D0%BD%D1%8B%D0%B9%20%D0%BE%D1%82%D0%B4%D0%B5%D0%BB.aspx, հասանելի՝14.04.2019:
29. Первая Ливанская война (1982),https://guide-israel.ru/history/240-pervaya-livanskaya-vojna-1982/, հասանելի՝ 13.12.2018:
30. Пошар О., Венский конгресс и судьба швейцарского нейтралитета, https://www.swissinfo.ch/rus/politics/%D0%B8%D1%81%D1%82%D0%BE%, հասանելի՝ 13.12.2018:
31. Сабра и Шатила (1982), http://www.ejwiki.org/wiki/%D0%A1%D0%B0%D0%B1%D1%80%D0%B0_%D0%B8_%D0%A8%D0%B0%D1%82%D0%B8%D0%BB%D0%B0_(1982), հասանելի՝ 21.05.2019:
32. Самая милитаризованная страна, http://disszakaz.ru/services/kandidatskaya-dissertatsiya/chto-takoe-dissertatsiya-na-soiskanie-

uchenoy-stepeni-kandidata-nauk/?yclid=4106173096615516664, հասանելի՝ 06.01.2019:

33. Советская историческая энциклопедия, “АМАЛЬГАМА”, https://dic.academic.ru/dic.nsf/sie/602/%D0%90%D0%9C%D0%90%D0%9B%D0%AC%D0%93%D0%90%D0%9C%D0%90?fbclid=IwAR3fWcyHpNrru4zuMjjML8yv2ooyr9xW_xeNfBB7bGlPOv_Zo_pLEaRIvRY, հասանելի՝ 18.05. 2019:
34. Французская армия старого режима, https://harmfulgrumpy.livejournal.com/1088707.html?fbclid=IwAR2r6parJgl1g6LyhHyzM86Z9HkLr8rA0mqwNOYlW5MeVghI3nLclRL7UOM, հասանելի՝ 21.05.2019:
35. Черноверская Т. А., Жизнь и деятельность Луи Антуана Сен-Жюста (1767-1794), № 6, 2002, http://vivovoco.astronet.ru/vv/-papers/ecce/st-just.htm?fbclid=iwar0an3z5pv6btoegtgrgq1cygf1wzt7k2lyfoislfd4ptj483ykvqodfzxk, հասանելի՝ 06.01.2019:
36. Шестидневная война, https://eleven.co.il/state-of-israel/arab-israeli-conflict/14808/, հասանելի՝30.03.2019:
37. Armeeleitbild XXI: Konzeption der Schweizerischen Armee zu Beginn des 21. Jahrhunderts, https://www.parlament.ch/centers/documents/de/armee-21-alb-entwurf-d.pdf, հասանելի՝ 06.01.2019:
38. https://www.northern.am/images/git-hraparakum/Azg-Banak.pdf, հասանելի՝ 28.02. 2019:
39. http://militera.lib.ru/h/mehring_f/pre.html, հասանելի՝ 28.02. 2019:
40. Электронная еврейская энциклопедия, https://eleven.co.il/zionism/from-balfour-to-state/10476/, հասանելի՝ 15. 02.2019:

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Ենգոյան Աշոտ Փայլակի
Սարգսյան Առնակ Գեորգիի
Ազատյան Խոսրովադուխտ Գարեգինի

«ԱԶԳ-ԲԱՆԱԿ» ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ԳԱՂԱՓԱՐԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

ПОЛИТИКО-ИДЕОЛОГИЧЕСКИЕ ОСНОВЫ КОНЦЕПЦИИ “НАЦИЯ-АРМИЯ”

THE IDEOLOGICAL AND POLITICAL BASIS OF THE “NATION-ARMY” CONCEPT

Համակարգչային ձևավորումը՝ Կ. Չալաբյանի
Հրատ. խմբագրումը՝ Մ. Հովհաննիսյանի

Տպագրված է «Քոփի փրինթ» ՍՊԸ-ում,
ք. Երևան, Խորենացի 4-րդ նրբ., 69 տուն:

Ստորագրված է տպագրության՝ 01.08.2019:
Չափսը՝ 60x84 $^{1}/_{16}$: Տպ. մամուլը՝ 5.375:
Տպաքանակը՝ 100:

ԵՊՀ հրատարակչություն
ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
www.publishing.am

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 2019
publishing.ysu.am